# ՎԼԱԴԻՄԻՐ ՔԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



Լազարեան Ինստիտուտ Արևելեան լեզուների ի Մոսկվա

Լազարեան Հայոց Հանրային Արևելեան լեզուների

Institut Lazareff des Langues Orientales à Moscou

# ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վլադիմիր Բարխուդարյան

Գ 11344

# ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

## /18-րդ ԴԱՐԻ ՎԵՐՋ - 20-րդ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ/

Դրքիս շնորհք է
սերբերեն թարգմանած ու
բարի յուսալ դրսևորիլ:
7.12.06թ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՍԱՏԵՆԱՇԱՐ
13

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
13

ԵՐԵՎԱՆ 2006

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25) : 37 (091)
ԳՄԴ 63.3 (2Հ) + 74.03
Բ 358

*Բարխուդարյան Վ.*
*Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական*
*Բ358 դպրոցների պատմության (18-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ) .- Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ հրատ., 2006.- 69 էջ:*

*Գրքույկը նվիրված է Ռուսական կայսրության տարբեր վայրերում ու քաղաքներում ձևավորված հայկական դաղութների ուսումնակրթական, առավելապես դպրոցական կյանքի ուսումնասիրությանը: Լուսաբանվում են ռուսական միջավայրի ազդեցությամբ հայկական շրջաններում տարվող ուսումնական գործընթացի բնորոշ կողմերն ու յուրահատկությունները:*

*Աշխատանքը նախատեսվում է մանկավարժների, պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:*

*ISBN 99941-969-7-9*

*ԳՄԴ 63. 3 (2Հ) + 74.03*
*ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006թ.*

## Երկու խոսք

Հյուսիսային կայսրության Ռուսաստանի տարածքում հայերի բնակություն հաստատելը, հայկական համայնքներ կամ գաղութներ հիմնելը կապված էր հայ-ռուսական հարաբերությունների աշխուժացման հետ: Հատկապես 18-րդ դարի երկրորդ կեսին Եկատերինա 2-րդ կայսրուհին /1762-1796/ որդեգրեց Պետրոս Մեծի երկրի հարավային սահմաններն ընդարձակելու, դեպի արևելյան շուկաները դուրս գալու քաղաքականությունը: Նա հարավային Կովկասի ժողովուրդներին՝ հայերին և վրացիներին համակիր էր տեսնում պետության ռազմաքաղաքական այդ ծրագրերը իրականացնելու խնդրում:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ գտնվելով Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ ենթարկվում էր տնտեսական և ազգային -դավանական դաժան ճնշումների: Նա համառորեն ելք էր որոնում ստեղծված ծանր ու մռայլ իրավիճակից դուրս գալու: Եվ քանի որ սեփական ուժերով չէր կարող թոթափել օտարի լուծը, երկրի ազատագրումը պայմանավորում էր դրսի պետությունների աջակցության հետ: Երկար դեգերումներից հետո հայ ազատագրական միտքը Հայաստանի ազատագրումը կապում էր Ռուսաստանի աջակցության հետ: 18-րդ դարը դարձավ ռուսական կողմնորոշման վերջնական ձևավորման պատմափուլ:

Մյուս կողմից ռուսական պետությունը ծով դուրս գալու, Հարավային Կովկասում հաստատվելու համար ձգտում էր երկրի հարավի գրեթե անմարդաբնակ տափաստանները բնակեցնել, տնտեսապես յուրացնել և հենարան ստեղծել հետագա առաջընթացի համար: Այդ նպատակով նա արտոնություններ էր տալիս այդ տարածքներում բնակվող առաջին հերթին առևտրատնտեսական կյանքում հմուտ ժողովուրդներին: Դրանից մեծապես օգտվեցին հայերը:

Ուրիշ խոսքով, արևելյան բռնատիրական պետությունների ծանր տիրապետությունից ազատագրվելու հայ ժողովրդի ձգտումները համընկնում էին դեպի հարավ-արևելք ծավալվող Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերին: Դրանք համահունչ էին: Ստեղծված բարենպաստ պայմաններում Ռուսաստանում, մանավանդ երկրի հարավային շրջաններում սկսեցին բնակություն հաստատել հայերը, որոնք ստացան առևտրատնտեսական և իրավաքաղաքական որոշակի առանձնաշնորհումներ: Հողային լայն տարածքներ տրամադրելուց, առևտուր կատարելու, տնտեսական ազատ գործունեություն ծավալելու լայն իրավասություն վերապահելուց զատ նրանց տրվեց նաև դավանանքի ազատություն, ազգային լեզվով դպրոցներ հիմնելու, գործավարություն կատարելու լայն իրավունքներ:

Օգտվելով ընձեռած հնարավորություններից կարճ ժամանակում հայկական գաղթվածները առևտրատնտեսական ասպարեզում հաջողությունների հասան և միջոցների տեր դարձան: Կյանքի բարեկեցիկ պայմանները հնարավորություն էին ընձեռում ուշադրության կենտրոնում պահել և ամեն կերպ խթանել ուսումնակրթական գործը: Մանավանդ, եթե նկատի ենք առնում այն հանգամանքն, որ ուսման նկատմամբ մեծ հակում ու ձգտում ունենալը մշտապես հատուկ է եղել հայ ժողովրդին:

Ուրվագծային սույն աշխատանքը ժամանակագրական առումով ընդգրկում է նոր շրջանը՝ 18-րդ դարի վերջերից մինչև առաջին աշխարհամարտի տարիները: Ուրիշ խոսքով, փաստորեն ռուսահայ դպրեվանքերի ուսումնական ամբողջ գործընթացը, քանի որ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո վերացան դպրոցները, նրանց հետ մարեցին նաև կրթական օջախները: Գրքույկում ընդգրկված չէ, առանձին ուսումնասիրություն կատարելու միտումով բաց է թողնված ռուսական կայսրության մի հատվածի Հայաստանի և ամբողջ հարավային Կովկասի դպրոցների պատմությունը:

Աշխատանքը կատարվել է Գերմանիայի Հալլե-Վիտենբերգ համալսարանում հիմնված «Մեսրոպ» հայագիտական

կենտրոնի /ղեկավար՝ պրոֆ. Հերման Գոլց, գիտաշխատող Խաչիկ Ղազարյան/ հետ համագործակցելով ու նրա պատվերով: Ինչպես դժվար չէ նկատել, գրքույկում մեծապես օգտագործվել է Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը, որոնց հայտնաբերման և մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում արխիվային գործի հմուտ մասնագետներ պատմ. գիտ. թեկնածու Ա.Միրզոյանին և Գ.Ավագյանին:

## Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական գաղութների պատմության (18-րդ դ. վերջ – 20-րդ դ. սկիզբ)

Ռուսական կայսրության սահմաններում հայկական ուսումնական հաստատությունների առաջացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն, բնականաբար սկզբնավորվում է այնտեղ հայ զանգվածների բնակչություն հաստատելու, հայկական գաղութների առաջացման հետ: Ի տարբերություն աշխարհի տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղութների, որոնց առաջացումը տեղի է ունեցել պատմական տարբեր ժամանակաշրջաններում և միանգամայն տարբեր դրդապատճառներով, Ռուսաստանի պարագայում գլուխը այլ էր:

Ռուսաստանի հայկական գաղութները առաջացան միջնադարից նոր շրջան, բուրժուական հարաբերություններին անցնելու պատմափուլում, 17-18-րդ դարերում: Ուրիշ խոսքով դրանց հիմնադրումը տեղի ունեցավ լուսավորական շարժման ժամանակաշրջանում: Մի շարժում, որը տարբեր ուղիներով թափանցում էր հայ իրականություն: Հայաղգի առաջադեմ գործիչները լուսավորություն տարածելու, կրթության մեջ էին տեսնում հայ ժողովրդի գոյատևման ու առաջընթացի ուղին: Նրանք լավագույնս գիտակցում էին, որ ազգը միավորել, նրա մեջ միասնական գաղափարախոսություն տարածելը անհնարին է առանց ժողովրդին լուսավորելու, առանց նրան խավարի ու տգիտության միջավայրից հանելու: Առանց ազգային կրթության ու ազգային ոգով դաստիարակության չէր ձևավորվի ազգային ինքնագիտակցություն:

Ահա թե ինչու ուսուցումը դիտում էին ժողովրդին խավարի ճիրաններից հանող, ինքնաճանաչման բերող հիմնական գործոն: Մոսկվայում, Պետերբուրգում և Եվրոպայի քաղաքներում կրթություն ստացած, ռուսական դեմոկրատական առաջավոր շրջանների հետ հարաբերվող հայ գործիչները /Խ.Աբովյան, Մ.Նալբանդյան, Ստ.Նազարյան, Ն. Աշտարակեցի և շատ ուրիշներ/ քարոզում էին ուսումնական հաստա-

տություններ հիմնելու, ժողովրդին լուսավորելու գաղափարը և գործնական քայլեր կատարում այդ ուղղությամբ:

Ռուսաստանում հայկական գանգվածների բնակություն հաստատելը, հայկական գաղութների առաջացումը կապվում է հյուսիսային հզոր կայսրության միջոցով Թուրք-պարսկական ծանր լուծը թոթափելու հայ ժողովրդի ազատագրական շարժման հետ: Իսկ հայ ժողովրդի ազատագրական մաքառումները համընկնում էին ռուսական պետության Սև ծով դուրս գալու, Անդրկովկասում հաստատվելու և արևելյան շուկաներին տիրելու ռազմաքաղաքական ծրագրերին: Այդ ծրագրերը իրականացնելու խնդրում ռուսական արքունիքը օտարի տիրապետությունից ազատագրվելու ձգտող հայերին և վրացիներին իրեն համակիր էր տեսնում և հովանավորող քաղաքականություն տանում նրանց նկատմամբ:

Տակավին Պետրոս Մեծը արտոնություններ էր տվել կայսրության հարավային սահմաններում բնակություն հաստատող հայերին: Եկատերինա 2-րդ կայսրուհին /1764, 1779 թթ./, Պավել 1-ը /1797, 1799/ և Ալեքսանդր 1-ը /1801 թ./ կայսերական հրովարտակներով Ռուսաստանում բնակություն հաստատող հայ գանգվածներին վերապահում էին բավականին լայն առանձնաշնորհումներ:

Օգտվելով պետության ընձեռած հնարավորություններից հայերը գաղթում և բնակություն են հաստատում ռուսական կայսրությունում: Առաջին հայկական գաղութները ձևավորվեցին Մոսկվայում և Աստրախանում: Հայերը տակավին 15-16-րդ դարերից առևտրական կապեր ունեին ռուսական մայրաքաղաքի հետ և աստիճանաբար սկսեցին այնտեղ բնակություն հաստատել: Կասպից ծով-Վոլգայան ուղիով մետաքսի առևտրի շնորհիվ, որում ծանրակշիռ դեր ունեին հայերը, Աստրախանի հայ բնակչությունը ստվարացավ: Այս երկու քաղաքներում ավելի շուտ, 17-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեցին հայկական գաղութներ, սակայն դրանց զարգացումը կատարվեց հետագա շրջանում:

Ռուսական նոր մայրաքաղաքի՝ Պետերբուրգի հիմնադրումից /1703 թ./ անմիջապես հետո հայերը հաստատվեցին

այնտեղ և ընդամենը մի քանի տասնամյակ անց այստեղ ձևավորվեց հայ համայնքը[1]:

Միջին Ասիան 19-րդ դարի երկրորդ կեսին միացվեց Ռուսաստանին: 1867թ. կազմվեց Թուրքեստանյան գեներալ-նահանգապետությունը, որը շուտով վերածվեց Թուրքեստանյան երկրամասի:1869թ. ռուսական կովկասյան բանակի զորքերը Կասպից ծովի արևելյան ափին հիմնեցին Կրասնովոդսկ քաղաքը: Ապա սկսվեց առաջխաղացումը դեպի երկրամասի արևելյան շրջանները և հիմնվեցին Կզըլ-Արվաթ, Աշխաբադ, Մերվ, և այլ հենակետային քաղաքներ: Միջին Ասիայում հայերը իրենց համայնքներն էին ստեղծել Աշխաբադում, Կրասնովոդսկում, Կզըլ-Արվաթում, Մերվում, Տաշքենդում, Սամարղանդում ինչպես նաև այլ քաղաքներում[2]:

Ռուսաստանի տարածքում հիմնված հայկական գաղութներին վերապահվեց ոչ միայն առևտրատնտեսական կյանքը զարգացնելու առանձնաշնորհումներ այլ նաև սեփական դավանանքն ու ազգային լեզուն պահպանելու արտոնություններ: Նշանակում է պետության ընձեռած հնարավորությունները նպաստավոր հող էր պատրաստում ուսումնական օջախներ հիմնելու, լուսավորություն տարածելու համար:

Հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը բացահայտել է այն իրողությունը, որ գաղութների առաջացումն ամենուր կատարվել է երկու հիմքի վրա: Գաղթող հայ զանգվածը նոր բնակավայրում մտահոգվում և առաջին հերթին հիմնում է եկեղեցի և ուսումնարան, սեփական հավատն ու լեզուն, ազգային ինքնության հիմնական գործոնները պահպանելու համար:

Հետևաբար ռուսահայ գաղութների առաջացումից շատ չանցած այստեղ սկզբնավորվեց նաև ուսումնական գործը: Անտարակույս Ռուսաստանում ուսումնակրթական գործու-

---

[1] Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974:
[2] А.А.Григорян, Армяне в средней Азии, Ереван, 1984, стр. 7-32.

նեությունն ծավալելու մեջ էական նշանակություն ուներ նաև հայ ժողովրդի ուսման նկատմամբ ունեցած սերն ու առանձնահատուկ վերաբերմունքն, որը հատուկ էր նրան և գալիս էր դարերի խորքից:

Ռուսական կայսրությունում Պետրոս 1-ի ռեֆորմներով զգալիորեն բարելավվում է կրթության ասպարեզը: Պետական, աշխարհիկ դպրոցների հիմքերն են դրվում, ուր ուժեղանում է բնագիտական – մաթեմատիկական գիտելիքների ուսուցման ուղղությունը:

Կրթության համակարգը բարելավվելու գործում էական էր 1804թ. ընդունված «Համալսարաններին ենթակա ուսումնական հաստատությունների կանոնադրությունը»: Դրա համաձայն մտցվեցին ուսումնական հաստատությունների նոր համակարգ՝ ա – ծխական դպրոցներ, բ – գավառական ուսումնարաններ, գ – գիմնազիաներ և դ – Համալսարաններ:

Ուսումնական գործընթացը խիստ կենտրոնացված բնույթ ստացավ: Բոլոր ծխական դպրոցները ենթարկվում էին գավառական ուսումնարանի տեսչին, որն իր հերթին ենթակա էր գիմնազիայի դիրեկտորին, սա էլ համալսարանի տնօրենին, վերջինս էլ ուսումնական օկրուգի հոգաբարձուին:

Ծխական դպրոցներն ունեին ուսման 1 տարվա, գավառականը՝ 3, գիմնազիաները 7 տարվա տևողություն: Բոլոր դպրոցներում ուսումը հայտարարված էր ձրի:

1804թ. կանոնադրությունը կրում էր ժամանակի արևմտաեվրոպական մանկավարժական առաջավոր մտքի ազդեցությունն և անշուշտ դրական նշանակություն ունեցավ ժողովրդական կրթության ասպարեզում: Մերժվում էր միջնադարյան դպրոցին հատուկ դասայնությունը, ուսումը ձրի էր, պահպանվում էր տարբեր աստիճանի դպրոցների ուսումնական ծրագրերի հաջորդականությունը և այլն[1]:

1811թ. Կրոնի դասավանդումը վերականգնվում է բոլոր ուսումնական հաստատություններում:

---

[1] Տես Ս.Հ.Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը XIXդ. առաջին կեսին, Երևան, 1969, էջ 24-29:

1828թ. Նիկոլայ 1 – ին կայսրի կողմից կյանքի կոչված ուսումնական նոր կանոնադրությունը հետադիմական որոշ փոփոխություններ է մտցնում 1804թ. կանոնադրության մեջ: Վերացվում է ուսումնական դործընթացի հաջորդականությունը, ծրագրերի շարունակականությունը: Ուսումնական ամեն մի աստիճան ստանում է պարփակված, ավարտուն բնույթ: Փաստորեն մտցվում է դասային խտրականության սկզբունքը: Հասարակության ստորին խավերն ուղղվում են դեպի տարրական կրթությունը՝ ծխական և դավառային դպրոցները, իսկ բարձր խավերն՝ միջնակարդ և բարձրագույն կրթությունը:

Ռուսական կայսրությունում հայկական դպրոցները, մանավանդ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը, գտնվում էին երկակի դրության մեջ: Մի կողմից ենթարկվում էին պետության կողմից մշակված ուսումնական համակարդին, մյուս կողմից, քանի որ ռուսահայ թեմի միջոցով ենթակա էին հոգևոր իշխանությանը՝ Էջմիածնի Մայր Աթոռի վերակացությանը, հետևում էին եկեղեցու մշակած ուսումնական դործընթացին:

Արևելահայ իրականության մեջ գերաղանցապես եկեղեցու հովանու տակ գտնվող ուսուցումն ուներ մշակված և դործնական կյանքում կիրառվող հետևյալ եռաստիճան կարդը: Ծխական, հոգևոր և թեմական դպրոցներ:

Ծխական դպրոցները հատկապես սկզբնական շրջանում, 19-րդ դարի առաջին կեսում, հետամնաց ձևերով հաճախ եկեղեցու անկիրթ սպասավորների միջոցով դործող, տնայնադործական պարզունակ եղանակով կազմակերպված ուսումնարաններն էին: Այստեղ սովորեցնում էին դրաճանաչություն, թվաբանություն, կրոն: Դաստիարակության հիմնական միջոցը ծեծն էր, ուսուցման եղանակը՝ անդիր սերտելը: Չկար ուսումնական որևէ ձեռնարկ, դիտելիքների գնահատման որևէ չափանիշ: Արխիվներում պահպանվել են Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքի ծխական վարժարանի /1842թ./ աշակերտներին դասատուների կողմից տրված բնութագրումները: Ահա դրանք. «1. Ս.Տ. Մելիք – Պոպով – 17 տարեկան, պիտա-

նի է երգի և վայելչապրության մեջ, իսկ ընթերցման մեջ՝ բուռ. վարքով միջակ է, ուսմամբ ծույլ է, 2. Ղորղանով – 22 տարեկան, վայելչապրության մեջ՝ լավ, երգեցողության մեջ՝ միջակ, ընթերցման մեջ միջակ՝ վարքով համեստ, կյանքում /կենոք/ հիվանդ, ուսման մեջ դանդաղ»[4]:

Ծխական դպրոցները պահպանվում էին եկեղեցական արդյունքներով, սովորողների մուծումներով և ժողովրդի կամավոր նվիրատվություններով[5]:

1860 - ական թվականներին ռուսական ամբողջ կայսրությունում կատարված բարեփոխումները, հասարակական – քաղաքական վերելքը աշխուժություն մտցրեց նաև ուսումնակրթական մարզում: Ժամանակի ոգին թելադրում էր որոշակի քայլեր կատարել ուսումնական գործընթացում վերափոխումներ կատարելու ուղղությամբ: Ընդհանուր բարենպաստ մթնոլորտին լիցք հաղորդեց նաև հայ իրականության մեջ կատարված մի իրողություն: 1866թ. Գևորգ արքեպիսկոպոսն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս:

Նորընտիր կաթողիկոսը հայտնի էր որպես ուսումնասեր, իր ողջ կյանքը կրթական գործին նվիրած անձնավորություն: Նրա առաջին քայլերից մեկն է լինում դպրոցական գործի կարգավորումը: Գահին նստելու հենց հաջորդ տարում կաթողիկոսը Էջմիածնի միաբաններից կազմում է դպրոցական կանոններ մշակող հանձնաժողով: Շուտով հրապարակվում է ծխական դպրոցների կանոնադրությունը, որով հանձնարարվում էր քաղաքի և գյուղերի բոլոր եկեղեցիներին կից ունենալ մեկական ծխական դպրոց, մեկ կամ երկու դասատուով: Էականն այն էր, որ այդ դպրոցները պետք է կառավարվեին ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձուների միջոցով: Երեք հոգուց բաղկացած հոգաբարձուներից մեկը լինելու էր տվյալ եկեղեցու հոգևորականը, իսկ երկուսը աշխարհական: Կանոններով սահմանվում էր ծխական դպրոցներում ավանդվելիք

---

[4] ՀՀ Ազգային արխիվ, /այսուհետև ՀԱԱ/ ֆ. 52, ց 8, գ. 52, թ. 43-44:
[5] Լևոն Սարգսյան, Ժողովրդի կրթության գործը մեզանում, Մոսկվա, 1892, էջ 20:

առարկաները՝ կրոն, հայերեն ընթերցանություն, քերականություն, ռուսաց լեզու, թվաբանություն: Դպրոց կարող էին ընդունվել 7-11 տարվա երեխաները[6]: Այսպիսով, 1868թ. կանոններով ծխական դպրոցները դուրս են գալիս թեմական դպրոցների իրավասություններից և ենթարկվում են իրենց հոգաբարձուներին: Այդ բարեփոխումներով մեծապես բարելավվեց ուսուցումը ծխական դպրոցներում:

Դպրոցական ուսման կազմակերպման հաջորդ տեսակը հոգևոր դպրոցն էր: Այս դպրոցը կարծես թե ծխականի շարունակությունն էր կազմում և ավելի շատ դիտելիքներ էր տալիս: Դրանք ունեին 3 – 5 հիմնական դասատուներ, իսկ ուսման ամբողջ ընթացքը տևում էր 6-8 տարի: Հոգևոր դպրոցներում բացի ծխական դպրոցների ծրագրերից դասավանդում էին նաև հայոց, ռուսաց և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, գծագրություն, ֆիզիկա: Հետագայում նշանավոր հոգևոր դպրոցները փաստորեն դարձել էին միջնակարգ կրթական ուսումնարաններ: Թեպետև «հոգևոր» էին կոչվում, սակայն ավելի շատ աշխարհիկ բնույթ ունեին: Նշանավոր հոգևոր դպրոցներ կային Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Ախալքալակում[7]: Ռուսաստանի տարածքում, հայկական գաղթավայրերում դպրոցների այս տիպը տարածում չգտավ:

1869թ. Գևորգ Դ. կաթողիկոսն ընդունեց թեմական դպրոցների կանոնադրությունը[8]: Թեմական դպրոցներն ընդունելու էին ծխական դպրոցների ավարտողներին: Նրանք ունենալու էին 3 դասարան: Դասավանդող առարկաների թվում ավելացվում էին աշխարհարար և դրաբար շարադրություն, հայ գրականություն, աշխարհագրություն, ճարտասանություն, ֆրանսերեն: Այստեղ ևս ամրապնդվում էր հոգաբարձուների դերը, որի նախագահը պետք է լիներ թեմական առաջնորդը: Թեմական դպրոցների նյութական մի-

---

[6] Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 35-38:
[7] Նույն տեղում, էջ 46-50:
[8] «Արարատ», 1869, հատ. ժ, էջ 141-146:

ջոցները գոյանում էին հիմնականում թեմի եկեղեցիների գումարներից:

Ռուսաստանի հայկական գաղթավայրերի միակ դպրոցի Նոր Նախիջևանի թեմականի պահպանման համար դեռևս հիմնադրման ժամանակ վիճակավոր Մակար արքեպիսկոպոսը սահմանել էր թեմի 38 եկեղեցիների ու վանքերի յուրաքանչյուրի տարեկան վճարելիք գումարի չափը: Ստացվող գումարի կեսը բաժին էր ընկնում Նոր Նախիջևան քաղաքի վեց և հինգ հայկական գյուղերի եկեղեցիներին: Զգալի էին Պետերբուրգից և Մոսկվայից ստացվող գումարները, իսկ մյուս եկեղեցիների մուծումները չնչին գումար էր կազմում:

* * *

Ռուսական կայսրությունում բնակություն հաստատած հայերի շրջանում առաջին դպրոցներն երևան եկան հենց 18-րդ 80-ական թվականների սկզբներին Պետերբուրգի նշանավոր գործիչ Մարգար Մանուչարյանի նախաձեռնությամբ Աստրախանում կազմակերպվում է մասնավոր ուսումնարան: Այստեղ առևտրականների երեխաները սովորում էին գրագիտություն և ստանում այնպիսի գիտելիքներ, որոնք անհրաժեշտ էին առևտրական գործունեության համար[9]:

Այդ նույն ժամանակ դպրոցներ էին գործում Նոր Նախիջևանում և նրա մերձակա Սուրբ Խաչ վանքում: Ուշագրավ է, որ ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանը Պետերբուրգից զգուշացնում էր Ղրիմից գաղթած, բայց դեռևս բնակություն չհաստատած հայությանը, որ քաղաքի և հայկական գյուղերի հիմնադրման ժամանակ եկեղեցիների և վանքի համար ընդարձակ տեղ հատկացնել այնտեղ դպրոց, տպարան հիմնելու համար. «Արդ պատվիրեմ սիրելացդ իմոց,- գրում էր նա 1780թ. ապրիլին,- եթե մինչև մեր այդր գալն քաղաքի ձերոյ տեղն բաժանելոյ լինին 6 եկեղեցւոյ և մեկ վանքի տեղն լինից մերձ դեղոցն. այսքան մեծ լինիցի, որ սա

---

[9] Տես Կ.Հ.Գրիգորյան, Армянская культурная колония в Петербурге в 18в. /«Տեղեկագիր» 1953, մն 9./

բավականացնի դպրատանն, տպագրատան /ընդգծումը մերն է- Վ.Բ./, միաբանից խցերի, բաղնի և այլ հարկաւորութեանց տեղ ունիցի, որոց մէջն կառուցեալ լինի եկեղեցին և շուրջ զնովաւ վերոհիշեալքն ըստ իւրաքանչիւրոց պատշաճաւոր տեղւոջ, որ լինիցի բարեկրութիւն բաղաքի ձերոյ և յաւիտենական պարծանք ըստ հաւուր ապդին և Աթոռն մերոյ»[10]: 1783թ. նա Հովհաննես Լազարյանին գրում էր, որ դպրոց է կառուցում և Թիֆլիսից քահանա է հրավիրում ուսուցանելու համար[11]: Շուտով բացվում է դպրոցը: 1780 - ական թվականների վերջերին բացվում է նաև Ախաչ վանքի դպրոցը: 1791թ. ռուս - թուրքական պատերազմի հետևանքով որբացած 30 մանուկների հոգևոր առաջնորդը՝ Հ.Արղությանը ուղարկում է ուսուցանելու այնտեղի գործող վարժարանը, ուր արդեն կար 40 աշակերտ[12]: Գաբրիել Պատկանյանը Սուրբ Խաչ վանքի վարժարանը համարում է առաջին հայկական գիշերօթիկ դպրոցը:

18 - րդ դարի վերջերին Նոր Նախիջևան քաղաքում ևս վարժարան է բացվում: Եկատերինա 2-րդ-ին ընդունելու համար հատուկ կառուցված շենքը 1794 թ. կայսրուհու ցանկությամբ նվիրվում է Հ.Արղությանին: Վերջինս այստեղ բացում է հոգևոր դպրոց, որը շենքի առումով կոչվում է «խոնախ»[13]: Հետագայում «խոնախը» վերաշինվում և վերափոխվում է զավառային դպրոցի:

19-րդ դարի առաջին կեսին ծխական դպրոցներ են բացվում մի շարք հայաշատ բնակավայրերում: Անշուշտ դրան զուգահեռ հիմնվում են նաև մասնավոր դպրոցներ: Այսպես օրինակ հենց դարասկզբին, 1803 թ. Նոր Նախիջևանում դպրոց են բացում Լազարյանները: Այդ նույն տարում դպրոցի ուսուցիչ Հովհաննես Չերքեզյանը Հովակիմ Լազարյանին

---

[10] ՀՀԱԱ, ֆ. 54, գ. 2509, թ. 2:
[11] ՀՀ ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ /այսուհետ Մատենադարան/, ձեռագիր նո. 4496, թ. 143:
[12] Նույն տեղում, ձեռ. նո. 2949, թ. 470:
[13] ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Ե.Շահազիզի արխիվ, մասն 1, գործ 11:

տեղեկացնում էր, որ սովորողների թիվը հասել է 20-ի և հավաստելով որ շուտով նրանց քանակը կանցնի 40-ից խորհուրդ էր տալիս ուսուցիչների վարձը ամիս առ ամիս անխափան ուղարկել, Լազարյանների անվան հետ կապվող այդ ձեռնարկման հաջողությունը ապահովելու համար: Վերջում քաղաքի հայ հասարակության անունից դրվատանքի խոսքեր էր ուղղում Լազարյան եղբայրներին[14]:

Տարածում գտած ծխական դպրոցների մի մասը գոյատևում են մինչև վերջ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը, մյուս մասը վերափոխվում է առավել լուսավորյալ դպրոցի, իսկ որոշ դեպքերում տարբեր պատճառներով փակվում: Ծխական դպրոցների մասին գաղափար կազմելու նպատակով ծանոթանանք դրանցից երկուսին:

Նոր Նախիջևանում 1811 թ. բացվում է ծխական ուսումնարան, որը բարվոք վիճակում էր և այդ առումով տարբերվում էր քաղաքի մյուս ուսումնարաններից: Դպրոցի 1840 թ. հաշվետվությունից երևում է, որ ուներ երկու բաժին, որոնցից առաջինը նախապատրաստական բնույթ ուներ: Սովորողների թիվը հասնում էր յոթանասուն հոգու, իսկ ուսուցիչներինը՝ չորսի: Դասավանդում էին հայերեն, ռուսերեն, թվաբանություն, օրենսգիտություն: Տարվա ընթացքում ուսուցիչը բազմիցս քննության էր ենթարկում աշակերտներին, իսկ տարվա վերջում պատվավոր քաղաքացիների, հոգևորականների ներկայությամբ կազմակերպում էր հրապարակային քննություն:

Դպրոցը տեղավորված էր աղյուսաշեն բարեկարգ շենքի երկրորդ հարկում և պահվում էր գերազանցապես նվիրատվությունների միջոցով: Դպրոցի ներքին կարգ ու կանոնին հետևում էր ռուսաց լեզվի և թվաբանության դասատու Միխայիլ Սակունը: Դրանից բացի քաղաքացիների միջից ընտրվում և պետության կողմից հաստատվում էր վստահելի մի

[14] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 102, վ. 7,9:

հոգի, որը հետևում էր դպրոցի գործերին, նյութական միջոցներ ձեռք բերելու խնդրին[15]:

Բնականաբար դպրոցը չէր կարող բավարարել երեխաներին անհրաժեշտ կրթություն տալու աճող պահանջը: Հոծ բնակչություն ունեցող Նոր Նախիջևանի հասարակությունը բազմիցս դիմում է պետական վերադաս ատյաններին դպրոցը վերակառուցելու նոր բարեկարգ ուսումնարանի: Ի վերջո պետական խորհուրդը 1849թ. որոշում է քաղաքում բացել գավառային ուսումնարան, իսկ ծխական դպրոցը դարձնել դրա մեկդասյա նախապատրաստական բաժին:

Քիշինևում ծխական դպրոց է բացվում 1828 թվականին: Այն անխափան գործում է տևական ժամանակ, մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները: 1912-1913 ուսումնական տարվա տեղեկագրի համաձայն դպրոցը երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք, 3 տարվա ուսման գործընթաց և 2 ուսուցիչ: Նրանցից յուրաքանչյուրը դասավանդում էր շաբաթական 22-24 ժամ: Պարապում էին կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն: Աշակերտների թիվը հասնում էր 26-ի: Դպրոցի գործերը տնօրինում էր 7 հոգուց բաղկացած հոգաբարձությունը: Ամեն տարի դպրոցի եկամուտներից ավելանում էր 500 – 600 ռուբլի գումար, որը հոգաբարձությունը ծախսում էր բարեգործական նպատակներով: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որոնց թիվը սակավ էր, պատրաստում էին գիմնազիա ընդունելու և հոգում նրանց կարիքները[16]:

Տասիններորդ դարի 60-ական թվականների բարեփոխումները, բուրժուական հարաբերությունների զարգացումը, դարի երկրորդ կեսին մեծ չափսերով խթանեցին ուսումնակրթական գործը: Նոր պահանջների ոգով բարեփոխվեցին դպրոցները, ստեղծվեցին տարբեր աստիճանների ու բնույթի կրթական նոր հաստատություններ: Ուսումնական օջախների աննախընթաց աճի մասին պատկերացում ունենալու համար

[15] Ռուսաստանի Ազգային արխիվ, ֆ 11, ց. 1, գ. 18, թ 6 - 11
[16] ՀԱԱ, ֆ. 56, ց 15, գ. 612, թ. 61-64:

նշենք, որ 1875թ. եթե Աստրախանի թեմում կար 15, իսկ նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում 26 դպրոց, ապա 1882թ. յոթը տարի անց, այդ թիվը Աստրախանում բարձրացավ 38-ի, իսկ մյուս թեմում՝ 60-ի[17]: Այսինքն մի քանի տարվա ընթացքում դպրոցների քանակը ավելի քան կրկնապատկվեց: Ազգաբնակչության շրջանում ամենից ավելի տարածված և նախնական գիտելիքներ հաղորդող ուսումնական հաստատությունը ծխական դպրոցն էր: Այդպիսի դպրոցներ հիմնվեցին ոչ միայն գյուղական վայրերում այլ նաև այնպիսի բնակավայրերում, որտեղ ապրում էին փոքրաքանակ, անգամ 15-20 հայ ընտանիք:

Դարի երկրորդ կեսին գործող ծխական դպրոցները տարբերվում էին նախկիններից թե դասավանդող առարկաների քանակով ու ծրագրերի ընդլայնման, ուսման տևողության, մանկավարժների որակավորման և թե դպրոցական կյանքի մյուս պարագաներով:

Աստրախանի թեմում ծխական դպրոցներ բացվեցին հետևյալ տարիներին: Եկատերինոդարում 1863թ., Եղեսիա գյուղում 1866 – ին, Արմավիրում 1869թ. արակն, իսկ 1880-ին օրիորդաց դպրոց, Մոզդոկում 1868թ., Վլադիկովկասում 1870-ին, Սուրբ Խաչում 1874-ին, Պյատիգորսկում 1887թ. և այլն[18]:

Ղրիմի թերակղզու հայկական բնակավայրերում ծխական ուսումնարաններ հիմնվեցին Սիմֆերոպոլում 1863թ. խառը՝ երկսեռ դասարաններով 5 և 3-ամյա ուսուցման ծրագրերով, Կերչում 1865-ին, Ղարասուբազարում 1878թ., Հին Ղրիմում 1884-ին և այլն: Միջին Ասիայի բնակավայրերում ծխական դպրոցներն ավելի ուշ բացվեցին: Աշխաբադում 1891 թվին, Մերվում, Կրասնովոդսկում 1905-ին, Ղզըլ-Արվատում 1906, Տաշքենդում, Քերքիում 1910 թվականին.

Նոր Նախիջևանի գաղութի հայկական գյուղերում, բացառյալ Զալդր և Թուփտի /Ղրիմ/ մեծ գյուղերի դպրոցների

---

[17] Վ.Երկանյան, նշված Աշխատությունը, էջ 121, 123:
[18] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, դ. 608, թ. 1-48, գ. 612, թ. 2-64:

բացման պատկերը հետևյալն էր: Մեծ Սալա գյուղում 1868 թվին հիմնվել էր 6-ամյա արական, իսկ 1893-ին 4 - ամյա իգական դպրոց: Նեսվիտայում ծխականը բացվել էր 1874 թվին, Փոքր Սալայում 1885, իսկ Կատերինոսլավում 1887 թվականին[19]:

Այս շրջանի դպրոցների մասին կոնկրետ դաղափար կազմելու նպատակով ծանոթանանք դրանցից մեկի հետ: Փոքր Սալա ոչ մեծ գյուղի ծխականը խառը դպրոց էր՝ աղջիկները և տղաները սովորում էին համատեղ, 5 - ամյա ուսուցման ծրագրով: 1912-1913 ուսումնական տարում դպրոցն ուներ 124 աշակերտ, 5 ուսուցիչ և 3 հոգուց բաղկացած հոգաբարձություն: Ուսումն սկսվում էր օգոստոսի 14-ից և վերջանում մայիսի 22-ին: Դասերը սկսվում էին առավոտյան ժամը 9-ին և վերջանում 2-ին: Յուրաքանչյուր դասի տևողությունը 50 րոպե էր: Ուսուցիչներն ունեին կրթական հետևյալ որակավորումը: Նրանցից երկուսը ավարտել էին Նոր – Նախիջևանի թեմական դպրոցը, մյուս երկուսը՝ Գևորգյան ճեմարանը, իսկ հինգերորդը՝ Նոր Նախիջևանի Գոգոյան օրիորդաց գիմնազիան: Ուսուցվող առարկաներով դպրոցը բավականաչափ հագեցված էր՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, հայոց, ռուսաց պատմություններ, ընդհանուր աշխարհագրություն, բնական պատմություն[20]: Ինչպես երևում է բերված օրինակից մի փոքր գյուղի ծխական դպրոցը բարվոք վիճակում էր և լայն գիտելիքներ էր տալիս երեխաներին:

Ծխական դպրոցների ուսուցչական կազմը մեծ չէր, սովորաբար ունենում էին 4-6 մանկավարժ, երբեմն նրանց թիվը հասնում էր 8-9-ի: Նրանք կրթական տարբեր որակավորում ունեցող մասնագետներ էին: Մեծ մասը Լազարյան, Գևորգյան ճեմարանների, Ներսիսյան , Նոր Նախիջևանի թեմական դպրոցների, առավել սակավ Երևանի, Շուշու թեմականների, ռուսական տարբեր քաղաքների գիմնազիաների

---

[19] ՀԱԱ, ֆ. 56, ց 15, գ 611, թ. 1-19:
[20] Նույն տեղում, թ. 9-12:

շրջանավարտներ, երբեմն էլ ուսման ընթացքը կիսատ թողած անձնավորություններ էին:

Անհրաժեշտ է նշել, որ տասիններորդ դարի առաջին կեսին ծխական դպրոցներից զատ հիմնվել էին նաև ավելի բարձր մակարդակի մի շարք ուսումնարաններ: Նոր Նախիջևանում գործում էր Վենետիկում կրթություն ստացած կաթոլիկ Մկրտիչ Եկանյանի ուսումնարանը: Նույն հայաքաղաքում 1837-1845 թվականներին գոյություն ուներ պատկանյան նշանավոր գերդաստանի ուսյալ մտավորական Գաբրիել Պատկանյանի մասնավոր դպրոցը: Տավրիկյան թերակղզու /Ղրիմ/ Ղարասու Բազար քաղաքում ժամանակի գիտուն վարդապետ Մանվել Կյումուշխանեցու նախաձեռնությամբ 1816թ. հիմնվեց դպրոց, որը գոյատևեց մինչև 20-րդ դարի սկիզբները: Նույն Կյումուշխանեցու մասնակցությամբ Գրիգորիոպոլում 1807թ. հիմնադրվեց դպրոց: Դարի 20-ական թվականների սկզբներին ուսումնարան բացվեց Ղզլարում և այլն:

Ուսումնական այդ հաստատությունների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Աստրախանի Աղաբաբյան դպրոցը: Ուսուցչական անձնակազմով, ուսումնական աշխատանքների կազմակերպման և սովորողների գիտելիքների մակարդակով, այն ժամանակի առաջավոր կրթական հաստատությունն էր: Աստրախանի վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը 1804թ. հատուկ խնդրանքով դիմում է ռուսաց կայսրին թույլտվություն ստանալու իր եղբայրների հիշատակը հավերժացնելու նպատակով հիմնել ուսումնարան[21]:1805թ. լուսավորության նախարարը հայտնում է, որ կայսրը տվել է իր համաձայնությունը: Սակայն հարմար ուսուցիչներ հավաքագրելու և այլ պատճառներով դպրոցի բացումը ձգձգվում է

[21] Ն.Աղաբաբյանը Պարսկաստանի Սպահան քաղաքից 50 տարի առաջ տեղափոխվել էր Ռուսաստան, ընդունել ռուսահպատակություն և Աստրախանում զբաղվում էր առևտրով: Նրա երկու եղբայրները մի քանի տարի առաջ վախճանվել էին: Նրանցից յուրաքանչյուրը թողել էր 15 հազար ռուբլի հայ մանուկների համար ռուսական հիմնելու նպատակով: Նա իր

և միայն 1810թ. դեկտեմբերին տեղի է ունենում հանդիսավոր բացումը:

Աղաբաբյան ուսումնարանը որևէ ձևով կապված ու կախված չէր հոգևոր իշխանությունից: Նրա տնտեսական մասի կառավարումն իրականացնում էր հիմնադիրը և ապա նրա զավակը, իսկ 1821 թվականից կառավարումն անցնում է պետական իշխանություններին: 1838թ. վերակառուցվում է 6 տարվա տևողությամբ 3 դասարանային դավառային ուսումնարանի և ամբողջովին ղեկավարվում այդ մասին գործող 1828 թ. մեր կողմից արդեն հիշատակված կանոնադրությամբ[22]: Այդ կանոնադրության համաձայն դավառային ուսումնարանները բացվում էին հատկապես առևտրականների, արհեստավորների և քաղաքաբնակների համար: Այդ պատճառով ուսումնական ծրագրերում մտցվում էին համապատասխան առարկաներ:

Դպրոցում դասավանդվում էին. հայերեն և ռուսերեն ընթերցանություն և քերականություն, կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, հաշվապահություն, թարգմանություն հայերենից ռուսերեն և ընդհակառակը[23]:

Բացառությամբ կրոնի և հայոց լեզվի մյուս, բոլոր առարկաները դասավանդվում էին ռուսերեն լեզվով: Դպրոցը բացվել էր հայ մանուկների համար և չնչին բացառությամբ այդպես էլ դատատևեց մինչև վերջ: Աշակերտների թիվը տատանվում էր 50-ից 150-ի միջև:

Սովորում էին և երթևեկ և գիշերօթիկ եղանակով: Գիշերօթիկ տների թիվը չէր անցնում 20-ից: Դպրոցը պատրաստում էր առևտրատնտեսական աշխատողներ, պետական ծառայողներ, հաշվապահներ, մաքսային պաշտոնյաներ, թարգմանիչներ:

Աղաբաբյան դպրոցն ուներ համեմատաբար որակյալ ուսուցչական կազմ, որով էլ հիմնականում պայմանավորված էր

---

միջոցներից 20 հազար ռուբլի ավելացնելով ցանկանում էր 50 հազար ռուբլով իրականացնել եղբայրների ուխտը:

[22] Տե՛ս Մ.Սանթրոսյանի նշված աշխատությունը, էջ 327-337

[23] ՀԱԱ, ֆ 52, ց 5, գ. 9, թ. 59-69:

*կրթության որակը: Դպրոցի բացման ժամանակ հրավիրվեց ժամանակի գիտուն ու ճանաչված գործիչներից Սերովբե Պատկանյանը, որն ավելի քան տաս տարի, մինչև 1822թ. մանկավարժական արդյունավետ աշխատանք կատարեց: Տարբեր տարիներ ուսումնարանում դասավանդել են նույնպես ճանաչում ունեցող մանկավարժներ:*

*Աղաբաբյան դպրոցը լինելով ժամանակի բարեկարգ ու բարձր մակարդակի, հարյուր տարի անընդմեջ գործող ուսումնական հաստատություն, հնարավորություն ընձեռեց հայ մանուկներին կրթություն ստանալու և պահպանելու մայրենի լեզուն, ազգային գիրն ու գրականությունը:*

* * *

*Նոր շրջանի հայկական ուսումնական հաստատությունների պատմության մեջ միանգամայն առանձնահատուկ տեղ է գրաղեցնում Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Այն ամբողջ մի դար եղավ հայ իրականության ամենակարևոր գիտակրթական օջախներից մեկը և համակողմանի ու բեղմնավոր գործունեությամբ մեծ հետք թողեց հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ:*

*Ճեմարանը հիմնադրվեց Լազարյան դերդաստանի նշանավոր ներկայացուցիչ, հայ ազատագրական շարժման ճանաչված գործիչ Հովհաննես Լազարյանի /1735-1801թ./ կտակի հիման վրա[24]: Կտակակատար Հովակիմ Լազարյանը եղբոր թողած գումարին ավելացնում է 200 հազար ռուբլի և նախա-*

---

[24]Լազարյանները Պարսկաստանի Նոր Ջուղա նշանավոր հայկական գաղութի անվանի վաճառականներից էին: Եղիազար Լազարյանը 18-րդ դ. կեսերին իր ընտանիքով տեղափոխվում է Աստրախան: Մի քանի տասնամյակ անց իր զավակների հետ /Հովհաննես, Մինաս, Հովակիմ/ բնակություն է հաստատում Մոսկվայում: Այստեղ Լազարյան եղբայրները, հատկապես նրանցից ավագը Հովհաննեսը հաջողությամբ զբաղվում են առևտրով, ծեռք են բերում կալվածքներ, հիմնում գործարաններ, հասրտություն կուտակում և դառնում երկրի ազդեցիկ մեծահարուստներից մեկը: Նրանք արժանանում են ռուսական կառավարության բարյացակամ ուշադրությանը, ստանում ազնվականության կոչում: 1758թ. Հովհաննես Լազարյանը տեղափոխվում է Պետերբուրգ, առևտրատնտեսական ակտիվ գործունեություն ծավալում

պատրաստվում դպրոցի բացմանը[25], որը տեղի է ունենում 1815 թվականին:

Լազարյանները սկզբնապես շատ համեստ խնդիր էին դնում իրենց առջև՝ 30-40 հայ երախաների համար կազմակերպել տարրական դիտելիքներ տվող դպրոց: Սակայն դպրոցի բացման հենց առաջին տարիներին սկսեցին հետամուտ լինել ավելի բարձր կարգի ուսումնարան հաստատելուն: Արդեն նպատակահարմար էին տեսնում հայ մանուկներին, ինչպես նաև այլազգի երեխաներին ավանդել այնպիսի դիտելիքներ ու լեզուներ, որոնք անհրաժեշտ են անձնական գործունեության և պետական ծառայության համար: Լազարյանները լավ էին հասկանում արևելյան լեզուների, առհասարակ արևելագիտության նշանակությունը Ռուսաստանի առևտրական և դիվանագիտական հարաբերություններում: Հետևաբար հարմար տեսան միավորել ուսումնարանի առջև դրված իրենց ազգային ակնկալիքները պետական բնույթի խնդիրների հետ:

Ուսումնարանն անվանվեց «Արևելյան Լեզուների հայկական ինստիտուտ» կամ ճեմարան: Նրա խնդիրն էր լինել ազգային կրթության կենտրոն, տալ հանրակրթական պատրաստություն՝ ուսումը շարունակելու և պետական ծառայության համար պատրաստել արևելագետ մասնագետներ, դիվանագետներ: 1834թ. ճեմարանը ստանում է երկրորդ կարգի արքունի ուսումնարանների, իսկ մի քանի տարի անց, արքունի գիմնազիաների իրավասություն: 1841թ. ճեմարանում

---

ռուսական նոր մայրաքաղաքում, բարեկամական հարաբերություններ պահպանելով կառավարական շրջանների հետ:

[25] Նոր Նախիջևանի գաղութում իմանալով կտակի մասին քանիցս դիմում են Հովակիմ Լազարյանին նախատեսվող ուսումնարանը Մոսկվայի փոխարեն բացել Նոր Նախիջևանում, որը հայաշատ է, կենտրոնական հարմար տեղում է, հետևաբար ուսումնարանի գործունեությունը առավել արդյունավետ կարող է լինել: Միաժամանակ խոստանում էին ամեն տեսակ օժանդակություն ու հոգացողություն: Անգամ Ներսես Աշտարակեցին մշակել էր բացվելիք ուսումնարանի 12 կետից բաղկացած կանոններ: Այդուհանդերձ նախապատվությունը տրվեց Մոսկվային:

բացվում է հոգևոր բաժին, հայ - լուսավորչական եկեղեցու սպասավորներ պատրաստելու համար[26]:

Ճեմարանի հոգաբարձու Խ.Լազարյանը և պետական ներկայացուցիչները մշակում են ճեմարանի նոր կանոնադրություն: Նախկին հինգ դասարանային ուսուցումը վերափոխվում է 8 դասարանային ուսուցման, ուժեղացվում է արևելյան լեզուների ուսումնասիրությունը: Ճեմարանին տրվում է լուսավորության նախարարության լիցեյների բոլոր իրավասությունները[27]:

Ճեմարանի ամբողջ պատմության ընթացքում Լազարյանները ջանում էին պահպանել հայկական ուսումնարան լինելու նրա առաքելությունը: Նրանք ամեն կերպ ապահովում էին հայոց լեզվի ու հայագիտության առարկաների դասավանդումը: Լուսավորության նախարարությունն ընդհակառակը, ձգտում էր ճեմարանին զրկել ազգային ոգուց, հավասարեցնել պետական մյուս հաստատություններին: Նախարարության հարկադրումների դեմ պատվար ունենալու նպատակով Լազարյանները ցանկանում են ուսումնարանը դնել նշանավոր պետական գործիչների հովանու տակ: Նրանց միջամտությամբ Եփրեմ կաթողիկոսը 1824 թ. դիմում է կայսրին և խնդրում ճեմարանի պրիզիդենտ կամ գլխավոր պետ նշանակել նշանավոր պետական գործիչ կոմս Ալ. Արակչեևին: Այդ խնդրանքը դրական լուծում է ստանում: Մինչև 1827 թ. ուսումնարանը ենթարկվում էր Արակչեևին, ապա նրան մինչև 1844 փոխարինում է ոստիկանության պետ կոմս Բենկենդորֆը: Վերջինիս փոխարինում է պետական խորհրդի նախագահ գեներալ - ատյուտանդ Ալ. Օրլովը: Հետագայում ճեմարանի գլխավոր պետ է դառնում գաղտնի խորհրդական Բուտկովը /1861-1870/ և ժողովրդական լուսավորության նախարար

---

[26] Լազարյան ճեմարանի մասին հայերեն և ռուսերեն լեզուներով գոյություն ունի մեծաքանակ գրականություն: Օգտվում ենք այդ աշխատություններից և հանրագիտարանային բնույթ ունեցող գրականությունից: Օգտագործում ենք նաև Պետերբուրգի պետական արխիվում և Երևանի մատենադարանում պահվող, մեր ձեռքի տակ եղած Լազարյանների արխիվի նյութերից:

[27] Ս.Սանթրոսյան, նշված աշխատությունը, էջ 346:

Դ.Տոլստոյը /1870-1872/: 1872թ. կանոնադրությամբ վերացվում է գիմնազիայի պետի պաշտոնը և ճեմարանն անցնում է լուսավորության նախարարության տնօրինության տակ:

Այդուհանդերձ Լազարյանները մնում են ուսումնարանի հոգաբարձուներ, պահպանվում է նրանց ենթակա վերատեսուչի պաշտոնը և ճեմարանը կարողանում է պահպանել հայագիտական ուղղվածությունը:

Լազարյան ճեմարանը մյուս ուսումնական հաստատություններից տարբերվում էր ուսման բովանդակությամբ, դասավանդվող առարկաների քանակով և նպատակային ուղղվածությամբ: Դասավանդվում էին հայերեն, ռուսերեն, կրոն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆրանսերեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, թաթարերեն: Ուսուցանում էին նաև ճարտասանություն, բարոյագիտություն, փորձնական ֆիզիկա, բնական պատմություն: Հոգևոր բաժնի աշակերտները ուսումնասիրում էին աստվածաբանություն, սուրբ գիրք, եկեղեցու պատմություն, ազատվելով որոշ լեզուներ սովորելու պարտականությունից: Առևտրական գործունեության պատրաստվողների համար լրացուցիչ դասընթացներ էին կազմակերպում հաշվապահության, տպագրանքագիտությունից:

Ուսուցումը կատարվում էր ժամանակի մանկավարժական առաջավոր մեթոդներով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով, նրանց ինքնուրույնությունն ու ակտիվությունը խթանելով: Ճեմարանի 1830թ. կանոնադրության մեջ հատուկ նշվում էր, որ ուսման հիմնական խնդիրը երեխաների ընդունակությունների բացահայտումն ու զարգացումն է: Բավարար չեն միայն ուսուցչի բացատրությունները, նա պետք է խթանի սովորողների ինքնուրույն մտածելու, դատելու ունակությունները: Ուսուցման սխոլաստիկական ձևերից հեռու մնալու, դրան գործնական բնույթ տալու համար ճեմարանը ուներ ֆիզիկայի, հանքաբանության, դրամագիտության կաբինետներ: Լեզուների ուսուցման մեջ կիրառվում էր գործնական, խոսակցական, կենդանի լեզվին վարժեցնելու եղանակը:

Ավելին, արևելյան լեզուների գործնական իմացության մեջ հմտանալու համար որոշ ճեմարանավարտ ուսանողների գործուղում էին համապատասխան երկիր:

Դաստիարակության առումով նույնպես ճեմարանը հետևում էր Ռուսաստանում կիրառվող ժամանակի առաջադեմ մեթոդներին: Վերոհիշյալ կանոնադրության մեջ հատուկ պահանջ էր դրվում երեխաներին անձնական օրինակով դաստիարակելու, նրանց թերացումների հանդեպ մեղմ ու համբերատար լինելու մասին: Պատժի թույլատրելի ձևերն էին՝ նկատողությունը, ամոթանքը, անկյուն կանգնեցնելը, նախաճաշից զրկելը, անունը սև տախտակում գրելը և այլն: Օրինակելի աշակերտներին խրախուսելու միջոցներն էին՝ դասարանում, ճաշարանում առաջին տեղը հատկացնելը, կրտսեր աշակերտների վրա վերակացու նշանակելը, անունը կարմիր տախտակի վրա գրելը և այլն:

Ուսուցչական որակյալ կադրերով ապահովելու առումով ճեմարանը, մյուս ուսումնական հաստատությունների համեմատությամբ ավելի լավ պայմաններում էր: Ուսումնարանը գտնվում էր կրթական, մշակութային այնպիսի կենտրոնում ինչպիսին Մոսկվան էր և ուներ բավարար նյութական հնարավորություններ բարձրորակ մանկավարժներ հրավիրելու համար: Հանրակրթական առարկաների և օտար լեզուների որակյալ դասատուների հարցը հեշտությամբ լուծվում էր: Դժվար էր հայագիտական առարկաների ուսուցիչների խնդիրը, մանավանդ ճեմարանի գոյության սկզբնական տարիներին: Դպրոցը տակավին չբացած, հայագիտական առարկաների դասատուներ հրավիրելու նպատակով, Լազարյանները դիմում են Կոստանդնուպոլիս, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյաններին, սակայն որևէ արդյունքի չեն հասնում:

Ճեմարանի հիմնադրման և սկզբնական տարիների համար մեծ հաջողություն էր, երբ Հովակիմ Լազարյանի հրավերով Մոսկվա տեղափոխվեց հայ նշանավոր լուսավորիչ, գրող – մանկավարժ Հարությունն Ալամդարյանը: Նա եղավ ճեմարանի կազմակերպիչներից և հմուտ ուսուցիչներից մեկը

մինչև Ներսիսյան դպրոց տեղափոխվելը՝ 1824 թվականը: Ճեմարանում հայագիտական, մանկավարժական աշխատանք էին կատարում Սերովբե, Հովակիմ Սալանթյան վարդապետները, Մեր Մսերյանը, որը քառորդ դար կրոն և գրաբար էր ավանդում: Երկար տարիներ դասախոսել, իսկ 1840-1860թթ. ճեմարանի տեսուչ է եղել նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը: Այնտեղ հիմնական դասախոսներ են եղել Ստեփանոս Նազարյանը, Սմբատ Շահազիզը և շատ այլ անվանի գիտնականներ: Դասախոսական կազմը Մոսկվայի, Պետերբուրգի, Եվրոպական երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած, սակավ բացառությամբ միջնակարգ կրթություն ստացած մանկավարժներ էին:

Աշակերտների հիմնական կազմը բաղկացած էր հայերից ինչպես և ռուսներից, իսկ վրացի և թաթար /ադրբեջանցի/ երեխաները սակավ էին: Սովորողների թիվը տատանվել է 80-290-ի միջև: Գիշերօթիկ եղանակով էին ուսանում աշակերտության զգալի մասը, հատկապես տարբեր վայրերից եկած հայ երեխաները: Ճեմարանում սովորում էին ոչ միայն Ռուսաստանի, այլ թվում Անդրկովկասի այլ անգամ արտասահմանյան երկրների հայ պատանիները: Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ինչպես նաև տարբեր կարգի միջնորդությունների միջոցով ընդունվում էին շնորհալի նաև ընչազուրկ հայ երեխաները: Ռուսաց լեզվին տիրապետելու նպատակով նրանց համար բացվում էր նախապատրաստական բաժանմունք:

Իր գոյության ընթացքում Լազարյան ճեմարանը տվեց 2000 – ից ավելի շրջանավարտներ, որոնք դարձան մանկավարժներ, զիվանագետներ, զինվորական, հոգևոր գործիչներ, վաճառականներ, պետական ծառայողներ: Նրանք արդյունավետ աշխատանք են կատարել երկրի հոգևոր և տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում: Ճեմարանում են կրթություն ստացել մանկավարժներ Գ.Հախվերդյանը, Պ.Շանչյանը, Զ.Մսերյանը, Ա.Բահաթրյանը, Մ.Մաղինյանը, արևելագետ – հայագետներ Մ.Էմինը, Կ.Եզյանը, Բ.Պատկանյանը, Գր.Խալաթյանը, Հ.Կուսիկյանը, Խ.Բարանովը, Հ.Գորդլևսկին,

Ա.Կրիմսկին, Բ.Միլլերը, Վ.Մինորսկին և շատ ուրիշներ[28]: Այստեղ են սովորել ականավոր հայ գրողներ Ռ.Պատկանյանը, Գ.Դողոխյանը, Ս.Շահազիզը, Հ.Հովհաննիսյանը, Վ.Տերյանը, թատերական հռչակավոր գործիչներ Կ.Ստանիսլավսկին, Ռ.Սիմոնովը, կուսակցական – պետական ականավոր գործիչ Ա.Ի. Մյասնիկյանը և շատ ուրիշներ:

Ճեմարանը ուներ իր սեփական տպարանը, հարուստ գրադարանը: Այն դարձավ նոր շրջանի գիտակրթական ամենանշանավոր հաստատությունը: Դասախոս - գիտնականների ծավալած գիտական գործունեությամբ, իր հրատարակություններով ճեմարանը եղավ արևելագիտության, հայագիտության զարգացման և այդ ուղղությամբ կադրեր պատրաստելու անփոխարինելի կենտրոն: Այստեղ հրատարակվեցին հայ ժողովրդի պատմության, գրականության, բանահյուսության վերաբերող բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, ժողովածուներ, դպրոցական դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ:

Լազարյան ճեմարանը ծանրակշիռ դեր կատարեց երկու ժողովուրդների հարաբերությունների, հայ ժողովրդին ռուսական մշակույթին հաղորդակից դարձնելու, ինչպես և հայ մշակույթը ռուսական շրջաններին ծանոթացնելու գործում:

Ռուսական կայսրության տարածքում գործող ուսումնական հաստատություններից նշանավոր է նաև Ղրիմի Թեոդոսիա քաղաքի Խալիբյան ուսումնարանը: Այն բացվեց 1858թ. Նոր Նախիջևանի մեծահարուստ Արտեմ Խալիբյանի նվիրատվությամբ, թեմի առաջնորդ Գ.Այվազյանի ջանքերով և նրա կազմած նախագծով:Ուսումնարանի աշխատանքները գլխավորում էր Այվազյանը, որը մանկավարժական աշխատանքի մեծ փորձ էր ձեռք բերել եվրոպայի այնպիսի մի քաղաքում ինչպիսին Փարիզն էր: Ուսումնարանը համարվում էր մասնավոր հաստատություն և չէր ենթարկվում լուսավորության նախարարությանը:

---

[28] А.П.Базиянц, Лазеревский институт восточных языков, Москва, 1959, стр. 3.

Գ.Այվազյանը իր կազմած ուսումնական ծրագրերով ջանում էր նորաստեղծ հաստատությանը տալ ազգային բնույթ՝ աշակերտներին հաղորդելով միջնակարգ կրթության դիտելիքներ: Դպրոցում ավանդվում էին հայոց, ռուսաց և ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, երկրաչափություն, պատմություն, աշխարհագրություն, կրոն, նկարչություն, դեղագրություն: Հետագայում ավելացվեցին ֆիզիկա և քիմիա առարկաները: Դպրոց էին հրավիրված հիմնավոր գիտելիքներ ունեցող մանկավարժներ: Աշակերտների թիվը տատանվում էր 60 – 90-ի միջև, որոնց մեջ կային նաև ձրիավարժ երեխաներ:

Խալիբյան վարժարանը այն ուսումնական հաստատություններից էր, որն ուներ իր տպարանը: Սեփական տպարանի առկայությունը հնարավորություն էր տալիս լուծել դասագրքերի, ձեռնարկների հարցը: Դպրոցի տպարանի միջոցով հրապարակ եկան «Այբբենարան», «Թվաբանություն», «Աշխարհագրություն», « Պատմություն միջին դարոց», «Պարտք և իրավունք», «Պատմություն հին ազգաց» և այլն[29]:

Ցարական իշխանությունը որոշակի հույսեր էր կապում խալիբյան դպրոցի հետ: Նա ծրագրում էր Արևելքի երկրներից հայ պատանիներ բերել ուսումնարան, որոնք ավարտելուց հետո վերադառնալով իրենց երկրները դառնային ռուսական ազդեցության տարածողներ: Այդ նպատակով կառավարությունը տարեկան 11000ռ. նպաստ էր տալիս դպրոցին: Սակայն ռուսական իշխանությունների հույսերը չարդարացան և նա կորցրեց հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ: Գեորգ կաթողիկոսը ձգտում էր այն տեղափոխել Նոր Նախիջևան և դարձնել թեմական դպրոց: 1870թ. կառավարության հրամանով դպրոցը փակվեց:

Ռուսական կայսրության ամենից ավելի խոշոր ու ստվար հայ բնակչություն ունեցող Նոր Նախիջևանի դաղութը ժամանակի պահանջները բավարարող կրթական օջախ

[29] Տես Վ.Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն /1801-1917/, Երևան 1970, էջ 287-305:

չուներ: Տեղի հայ հասարակությունը բազմիցս փորձեր էր կատարել, խնդրամատույց եղել պետական ատյաններին, բայց հարցը արմատական լուծում չէր ստացել: Գավառային ուսումնարանը վերակառուցվեց քաղաքային երկդասյա ուսումնարանի ապա բարձրագույն նախնական ուսումնարանի, սակայն այն չէր բավարարում կրթության նկատմամբ աճած պահանջները:

Գաղութի բնակչության կրթության, լուսավորության հարցում մտահոգ էին նաև հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչները: Հայ ականավոր գրող, հրապարակախոս Միքայել Նալբանդյանը, երբ բարձրացվեց հնդկահայ վաճառական Մասեհ Բաբաջանյանի Նոր Նախիջևանի կտակած գումարները տնօրինելու հարցը, առաջարկում էր. «Հիմնելու մի այնպիսի բարեկարգ դպրոց, որ առաջինը լիներ, և տասը տարու մեջ ամենայն հայ մարդ պարծանքով և զմայլքով դարձուցաներ յուր աչքը այդ դպրոցի վերա»[30]: Ազգի լուսավորության մեջ նրա ապագան տեսնող և դրա ջատագով հասարակական գործիչ, հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը «Ազգային մայր դպրոց» հիմնելու անհրաժեշտության մասին խոսելով գրում էր. «Այս պատճառով մտածում ենք, որ դպրոցի առավել պատշաճավոր տեղն է Նախիջևանը, Դոն գետի վրա, Ազովյան, ուրեմն Սև ծովին շատ մոտավոր, իսկ ժողովուրդը բոլորովին հայ և մոտ 20000 հոգի յուր շրջակա գյուղերով»[31]:

1860-ական թվականների բացված ուսումնարանների մեջ առանձնանում է Սուրբ Խաչ վանքում հիմնված ժառանգավորաց դպրոցը: Գևորգ դ կաթողիկոսը 1867թ. ժամանում է Նոր Նախիջևան, ծանոթանում գաղութի կյանքին և անհրաժեշտ գտնում Ս.Խաչ վանքում հիմնել ժառանգավորաց դպրոց, որը պետք է պատրաստեր հոգևոր գործիչներ: Նույն տարում կաթողիկոսը հաստատում է նախատեսվող դպրոցի

[30] Մ.Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1940, էջ 277:
[31] «Հյուսիսափայլ», 1864, Ոո 4, էջ 234

կանոնադրությունը[32]: Մարդասիրական ընկերությունը հանձն է առնում իր հովանավորության տակ վերցնել դպրոցը: Կանոնադրության համաձայն դպրոցը լինելու էր Ամենայն հայոց կաթողիկոսի ընդհանուր և Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմի առաջնորդների անմիջական վերահսկողության ներքո:

Հաջորդ տարում բացվում է դպրոցը, որի տնօրինությունը իրականացնում էր մարդասիրական ընկերության հոգաբարձության խորհուրդը: Վեցամյա դպրոցում ավանդվում էին հին ու նոր կտակարանի պատմություն, եկեղեցու և հայոց եկեղեցու պատմություն, թվաբանություն, բնագիտություն, ռուսաց լեզու, երկրաչափություն, գեղագրություն, երգեցողություն: Թեպետև դպրոցը խնդիր ուներ հոգևոր գործիչներ պատրաստել, սակայն գործնականում ավելի աշխարհիկ բնույթ ստացավ: Նախիջևանի վաճառականները և մյուս դասերի ներկայացուցիչները իրենց զավակներին տեղավորում էին այդ դպրոցում:Շուտով նրանց օրինակին են հետևում հայկական գյուղերի բնակիչները, որոնց մեծ մասը երեխաներին ընդունել էին տալիս որպես ձրիավարժ սաներ[33]:

Ժառանգավորաց դպրոցը լավ անուն էր վաստակել և նշանակալի դեր կատարեց քաղաքի և հայկական գյուղերի մանուկների կրթության գործում:

19-րդ դարի երկրորդ կեսին առաջընթաց կատարվեց նաև աղջիկների ուսման ասպարեզում: Ինչպես արդեն նշել ենք ծխական դպրոցներում ուսուցումը կազմակերպվում էր երկու եղանակով, աղջիկների և տղաների առանձնացված կամ համատեղ, որը վավերագրերում անվանվում է երկսեռ կամ խառը դպրոց: Դպրոցներում ուսման այս երկու ձևն էլ տարածված էին, բայց գերակշռում էին արական դպրոցները: Այսպես օրինակ, 1894 / 95 ուսումնական տարում կայսրության հայկական բնակչություն ունեցող բոլոր երկրամասերում

---

[32] ՀԱԱ, ֆ. 324, ց. 1, գ 15, թ. 11:
[33] Նույն տեղում, գ. 12, թ. 4:

/այդ թվում և Անդրկովկասում/ կար 143 արական, 54 իգական և 56 խառը դպրոց[34]:

Դարի 50-60 ական թվականներից սկսեցին բացվել մասնագիտացված իգական դպրոցներ: 1857թ. Նոր Նախիջևանի քաղաքացի Ա.Պոպովան ստանալով լուսավորության նախարարության համաձայնությունը բացում է առաջին իգական դպրոցը: Այնտեղ մյուս դպրոցներում դասավանդվող առարկաներից բացի ուսուցվում էր նաև ձեռագործ, երաժշտություն, պար[35]:

Մի քանի տարի անց հարց է բարձրացվում բացելու ավելի բարձր մակարդակի իգական ազգային նոր ուսումնարան: Այդ ցույց էր տալիս իգական սեռի կրթության հարցում հայկական գաղութի հասարակության ողջամիտ վերաբերմունքը: Քաղաքագլուխ Կ.Հայրապետյանը արտահայտում էր Նոր Նախիջևանցիների կարծիքը կանանց ուսում տալու, լուսավորելու հարցում: «Քանզի անցին գնացին ժամանակն այնօրիկ,- ասում էր նա դպրոցի բացման առիթով,- երբ հայէին ի վերա կանանց իբրև ի վերա ծառայից: Այժմ ի մերումս մարդասեր դարու լուսավորեալ աշխարհս հայի ի վերա կանանց իբրև ի վերա մարդկան...թող ուրեմն այսուհետև դստերք մեր չպարծին միայն արտաքին փառավոր և շքեղ զգեստուք և ակնակուռ զարդուք իւրեանց... այլ թող պարծի այսուհետև իւրաքանչիւր ոք ի նոցանէ անձնական անձնավորութեամբ իւրով, դիտութեամբ ազգի օգտակար ուսմանց /ընդգծումն իմն է, վ.բ/»[36]:

Լուսավորության նախարարությունը, ցավոք, մերժում է նոր ուսումնարան բացելու խնդրանքը պատճառաբանելով, որ գործում է Ա.Պոպովայի համանման դպրոցը:

Սակայն իգական դպրոց բացելու բնակչության պահանջը չէր մարում: Նոր Նախիջևանի նշանավոր վաճառական Մկրտիչ Գոգոյանը իր շարժական ու անշարժ գույքը և մի

---

[34] ՀԱԱ, ֆ 56, ց. 3, գ 314:
[35] Ռուսաստանի պետական պատմական արխիվ /ՌՊՊԱ/ , Ֆ 733, ց. 11, թ. 1856, գ. 241, թ. 1-2:
[36] «Համբավաբեր Ռուսիոյ», 1861, նո. 6:

պատկառելի գումար կտակում է մահից հետո իր անունը կրող իգական դպրոց բացելու համար[37]:

Կտակի իրականացումը ձգձգվում էր: Միայն 1877 թ. ստացվում է իրավասու ատյանների վճիռը դպրոցի բացման և այն կայսրուհի Մարիայի հովանավորության ներքո գտնվող ուսումնարանների կարգը մտցնելու մասին: Սակայն դպրոցի բացումը կատարվում է 1882թ. հանդիսավոր պայմաններում: Կազմակերպված ցերեկույթում հանդես են գալիս անվանի մանկավարժ Ա.Բահաթրյանը, գրող Ռ.Պատկանյանը[38]: Վերջինս գրվատելով Մ.Գոգոյանի նախաձեռնությանը, նշում է իգական սեռի կրթության և դաստիարակության կարևորությունը և դա համարում ավյալ ժողովրդի կամ նրա առանձին հատվածի քաղաքակիրթ լինելու չափանիշ:

Մ.Գոգոյանի երկհարկանի քարե տանն սկզբնապես բացված ուսումնարանում ընդունվում էին 7-11 տարվա տարբեր դասի պատկանող, գերազանցապես աղքատ ընտանիքների հայ աղջիկներ: Ուսման տևողությունը վեց տարի էր: Դպրոցն ավարտող աշակերտուհիները արտահագուստի համար միանվագ ստանում էին 150, իսկ գերազանցիկները՝ 200 ռուբլի:

Պետերբուրգի իգական դպրոցների համար 1876 թ. սահմանված ծրագրի մակարդակով ուսումնարանում անցնում էին հայոց և ռուսաց լեզուներ, ընդհանուր, ռուսաց և հայոց պատմություններ, հայկական եկեղեցու պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, երգեցողություն, նկարչություն, ձեռագործ, ուղղագրություն: Ցան-

---

[37] ՀԱԱ, ֆ. 139, գ. 1627, թ. 3-8: Մ.Գոգոյանը /1796-1865/ առևտրական ընկերություն էր հիմնել Ա.Խալիբյանի հետ: Վերջինիս բարեկամական հարաբերությունների մեջ էր ռուս գրող Ն.Կուկոլնիկի հետ: Կուկոլնիկը հաճախ էր լինում խալիբյանի մոտ, ուր ծանոթանում ու մտերմանում է Գոգոյանի հետ: Նա խորհուրդ է տալիս Գոգոյանին սեփական միջոցներն օգտագործել բարեգործական – լուսավորական նպատակներով, հիմնել իգական ուսումնարան: Այդ գաղափարը մոտ էր Մ.Գոգոյանի սրտին, մանավանդ իր չորս դստրերը մանուկ հասակում մահացել էին և նա մնացել էր անժառանգ:

[38] «Մեղու Հայաստանի», 1882, նո. 120:

կացողները կարող էին նաև երաժշտություն սովորել: Ռուսաստանի պատմությունից և աշխարհագրությունից բացի մյուս բոլոր առարկաներն ավանդվում էին հայերեն[39]:

Ուսուցչական կազմը ընտրվում էր գերազանցապես իգական սեռից, բայց խիստ ընտրությամբ և միայն բարձրորակ մասնագետներից: Ուսումնարանը կառավարում էր հոգաբարձական խորհուրդը, որի նախագահը լինում էր Նոր Նախիջևանի քաղաքագլուխը: Դպրոցի հիմնադրման և առաջին տարիների գործունեությունը հիմնականում կապվում է հոգաբարձական խորհուրդի նախագահ, քաղաքագլուխ Գ.-Սալթիկյանի անվան հետ:

Դոդոյան դպրոցը Նոր Նախիջևանի արդասավոր կյանք ունեցած ուսումնական հաստատություններից էր: Առանց նկատելի տատանումների գոյատևեց պատշաճ մակարդակով և բարի ունուն վաստակեց: Ուսումնարանի նշանակությունն անուրանալի է գաղութի և ոչ միայն նրա իգական սեռի կրթության ու դաստիարակության գործում:

Համանման իգական ուսումնարաններ կային Աստրախանում և հոծ հայ բնակչություն ունեցող այլ քաղաքներում:

* * *

Արդյունաբերության, գյուղատնտեսության, առհասարակ երկրի տնտեսության զարգացումն անհրաժեշտ էր դարձնում աճող սերնդին ոչ միայն հանրակրթական գիտելիքներ տալ, լուսավորել բնակչությանն այլ նաև մասնագետներ պատրաստել տնտեսության տարբեր ճյուղերում աշխատելու համար:

Իր հայրենի Դոնի հայության կենսունակ գոյությունը պահպանելու մեջ մշտապես նախանձախնդիր Ռաֆայել Պատկանյանը տարբեր առիթներով, հատկապես Նոր Նախիջևանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսների օրերին, քանիցս դրվատանքով անդրադարձել է գաղու-

[39] ՀԱԱ, ֆ. 54, ց. 1, գ. 1665, թ. 1-8:

թի նախկին բարեկեցիկ վիճակին և այդ հանգամանքը բացատրել ժամանակին նրա ունեցած զարգացած արհեստագործությամբ: «Հայը,- գրում էր նա,- ոչ միայն երևելի վաճառական է, այլև երևելի արհեստավոր է, ափսոս, որ մենք արհամարհել ենք այս մեր ազգային արդյունաբեր ընդունակությունը, և նորա բոլոր շահը թողել ենք անգլիացուն, գերմանացուն և հրեաներուն»[40]:

Նույն տեսակետն էին պաշտպանում նրա շատ կուսակիցներ և առաջարկում արհեստագործությունը զարգացնելու, պատանիներին արհեստների մեջ վարժեցնելու համար բացել մասնագիտացված դպրոց: Մեծ դրողը լավ էր հասկանում, որ սխալ կլիներ երեխաներին հմտացնել միայն արհեստների մեջ, ուստի ծրագրում էր նրանց տալ համապատասխան հանրակրթական գիտելիքներ: 1880թ. Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը հաստատում է կանոնադրությունը և նույն տարում էլ բացվում է արհեստավորական դպրոցը:

Ուսումնարանում ծխական դպրոցների ծրագրերից փոքր ինչ բարձր մակարդակով ավանդվում էին կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, հայոց պատմություն, երկրաչափություն, դծագրություն, աշխարհագրություն: Կանոնադրության համաձայն աշակերտները պետք է սովորեին բազում արհեստներ, բայց դպրոցը բացելուց հետո հնարավոր եղավ նրանց մասնագիտացնել երեք հիմնական արհեստի՝ փականագործություն, ատաղձագործություն և կոշկակարության մեջ: Օրվա ընթացքում հանրակրթական առարկաներին հատկացվում էր 3, իսկ արհեստներին՝ 4 ժամ: Դպրոց էին ընդունվում 10-12 տարեկան առողջ տղաները: Դպրոցի կառավարումն իրականացնում էր հինգ հոգուց կազմված հոգաբարձական խորհուրդը:

Շուտով կազմակերպվեցին համապատասխան արհեստանոցներ, ուր մշտապես հրավիրվում էին արհեստին կատարե-

---

[40] Սյուլոպ /Ռ.Պատկանյան/, Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը, Թիֆլիս, 1879, էջ 49:

լապես տիրապետող լավագույն մասնագետներ: Այսպես օրինակ, տարիներ շարունակ փականագործություն էր ուսուցանում Ռիգայում, Պետերբուրգում աշխատած գերմանացի նշանավոր մասնագետներ, ատաղձագործություն՝ Մոսկվայի հատուկ կուրսերում գծագրության դասընթաց անցած, Պետերբուրգի, Բաքվի, ռոստովի նշանավոր արհեստանոցներում աշխատած անվանի մի ռուս վարպետ[41]:

Արհեստի ուսուցումը պարտադիր էր դպրոցի բոլոր աշակերտների համար, բայց յուրաքանչյուրը, սեփական ընտրությամբ, պարտավոր էր սովորել մեկ արհեստ: Աշակերտների քանակը հասնում էր 50-60-ի: Դպրոցի նյութական միջոցները գոյանում էին Ս.Աստվածածին եկեղեցու հասույթներից, քաղաքային խորհրդարանի նպաստից, ունևոր աշակերտների ուսման վարձից և նվիրատվություններից, որը կատարվում էր բավականաչափ առատորեն: Ուսումնարանի բացման հենց հաջորդ տարում Ցարիցինից հայերի մի մեծ խումբ, և որ ուշագրավ է նաև երկու ռուս քաղաքացիներ նվիրաբերում են որոշակի գումար[42]: Սակայն այդ հանգամանքը դրությունը չէր փրկում: Դպրոցը եղավ այն ուսումնական հաստատություններից, որն իր գոյության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում, երեք ու կես տասնամյակի ընթացքում, նյութական միջոցների պակաս է զգացել: Եկամուտները հանրակրթական մյուս հաստատություններից ավելի էր, բայց ծախսերը ևս մեծ էին մասնագիտական ուսումը կազմակերպելու և չքավոր ընտանիքի զավակների համար, որոնց թիվը մեծ էր, գիշերօթիկ ուսուցում կազմակերպելու պատճառով:

Արհեստավորական դպրոցն, անշուշտ, դրական գործունեություն ունեցավ պատանիներին գիտելիքներ տալու և հատկապես արհեստներ սովորեցնելու մեջ: Այնուհանդերձ ուսումնարանը այն դերը չկատարեց, որպիսի հույսեր էին կապում հիմնադիրները: Իրավացի չէր լինի այդ հանգամանքը բացատրել հայ հասարակության անտարբերությամբ, քա-

[41] ՀԱԱ, ֆ. 11, գ. 13, թ. 21:
[42] «Մեղու Հայաստանի», 1881, Ն0. 151:

նի որ դպրոցի նկատմամբ ուշադրությունը ավելի մեծ էր: Բանն այն է, որ արհեստավորական դպրոցի գոյությունը համընկնում էր տնտեսական կյանքում արհեստների երկրորդական պլան մղվելու և զարգացող արդյունաբերության ճնշման տակ դրա քայքայման ժամանակաշրջանի հետ: Արհեստների մեջ մասնագիտանալը չէր բխում կյանքի հրատապ պահանջներից, ուստի և չէր կարող հաջողություն ունենալ: Խիստ առած, այն ժամանակավրեպ ձեռնարկում էր:

Տնտեսական կյանքի պահանջներն ավելի լավ ու ճիշտ էին ընկալում և մատաղ սերնդի մասնագիտացման խնդիրներին ավելի ռեալ ու գործնական ուղղություն տալիս Ռ.Պատկանյանի ժամանակակից ուրիշ հայ գործիչներ: Աղքատ հայ երեխաների համար տեխնիկական ուսումնարան բացելու համար վաճառական Ն.Ահնմյանը իր շարժական և անշարժ ամբողջ գույքը հատկացնում է /1888թ./ այդ նպատակին[43]: Ուսումնարանում հայոց լեզվի և հայկական եկեղեցու պատմությունը պարտադիր առարկաներ էին լինելու: Բոլոր առարկաները, բացառությամբ ռուսաց լեզվի, պատմության և աշխարհագրության ուսուցանվելու էին հայերեն: Մասնագիտական առարկաներից յայն ծրագրերով ավանդվելու էին ֆիզիկա, քիմիա, մեխանիկա, էլեկտրատեխնիկա, շոգեմեքենաներ և այլն[44]:

Կոտակատարների, քաղաքային խորհրդարանի, եկեղեցական հոգաբարձության և պետական վարչական հաստատությունների միջև սկսվում է զրաղրությունների, ձգձգվող բանակցությունների անվերջանալի մի գործընթաց: Այդ ամենն այնքան է երկարաձգվում, որ պայթում է առաջին համաշխարհային պատերազմը և ձախողվում է տեխնիկական ուսումնարան հիմնելու Ն.Ահնմյանի խելամիտ նախաձեռնությունը:

Ռուսաստանի հայկական շրջաններում հասկանում էին, որ արտագրության մյուս գլխավոր ճյուղում գյուղատնտե-

---

[43] ՀԱԱ, ֆ. 55, ց 1, գ 39, թ. 1:
[44] Նույն տեղում, գ. 261, թ. 41:

սության մեջ նույնպես անհրաժեշտ է մասնագետներ պատրաստել, երկրագործական աշխատանքները ժամանակի պահանջների մակարդակով վարելու համար: Վաճառական Ն. Սարինյանը գումար է հատկացնում /1886թ./ երկամյա երկրագործական դպրոց բացելու համար[45]: Այդ ծրագիրը, ինչպես նաև նույն նպատակով կատարված Ա.Խոջայանի նախաձեռնությունը տարբեր պատճառներով չեն իրականանում:

* * *

Ռուսական կայսրության ուսումնական հաստատությունների մեջ Լազարյան ճեմարանից հետո ուսումնակրթական նշանակալի կենտրոնը Նոր Նախիջևանի թեմական դպրոցն էր: Նկատելիորեն ուշ հիմնադրված այս դպրոցը կոչված էր բավարարելու նաև ժամանակի պահանջներին համապատասխան լուսավորյալ դպրոց ունենալու տեղի հայության պահանջները:

Ինչպես հայտնի է թեմական դպրոցները ծնունդ առան 1836թ. Նիկոլայ Ա-ի կողմից հաստատված «Հայ – լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրություն» կամ ինչպես ընդունված է ասել «Պոլոժենիայի» հիման վրա: Ռուսական կայսրության հայկական եկեղեցական ողջ համակարգը բաժանվում էր 6 թեմերի, որոնցից երկուսը՝ Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի և Աստրախանի թեմերը ձևավորվում էին Անդրկովկասից ու Հայաստանից դուրս, ռուսական տարածքում: Դպրոցական հարցին նվիրված «Կանոնադրության» 7 – րդ բաժնի հոդվածների համաձայն յուրաքանչյուր թեմ ունենալու էր մի հոգևոր դպրոց՝ սեմինարիա: Այդ հիման վրա թեմական դպրոցներ բացվեցին Թիֆլիսում և Երևանում /1837թ./, Շուշիում /1838թ./, Շամախիում /1844թ./:

Անդրկովկասի հայկական թեմերում, եթե «Պոլոժենիայից» անմիջապես հետո դպրոցներ հիմնվեցին, ապա բուն Ռուսաստանի երկու թեմերում դրանց հիմնումը միանգամայն

---

[45] Նույն տեղում, ֆ. 54, գ. 1824:

այլ ընթացք ստացան՝ հանդիպելց բարձրագույն տայանների դիմադրությանը: Աստրախանում թեմական դպրոց այդպես էլ չստեղծվեց, չնայած այդ հարցը բազմիցս արծարծվեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների շրջանակներում: 1895թ. Աստրախանի հայերը հատուկ ժողովում որոշում են բացել թեմական դպրոց: Թեմական Արիստակես եպիսկոպոսը եռանդով գործի անցավ, այդ նպատակով կատուցվեց հատուկ հարմարավետ շենք: Սակայն իշխանություններն ընդառաջ չգնացին, արգելեցին: Այնտեղ թեմական դպրոցի դերը ինչ որ եղանակով կատարում էր Աղաբաբյան դպրոցը: Նոր Նախիջևանում ոչ միայն թեմական այլև բարձր հիմքերի վրա դրված որևէ կրթական օջախ հիմնադրելու բոլոր փորձերը նույնպես հանդիպում էին կառավարության ուսումնական գերատեսչությունների արգելքներին: Եվ ինչպես նկատեցինք մինչև 1870-ական թվականների վերջերն այդ ասպարեզում որևէ նկատելի առաջընթաց չկատարվեց:

Խալիբյան ուսումնարանը փակվելուց անմիջապես հետո, 1871թ. քաղաքի հայ հասարակությունը դպրոցի ծախսերը հոգալու պարտավորությամբ դիմում է հայոց կաթողիկոսին և խնդրում այն փոխադրել Նոր Նախիջևան: Կաթողիկոսը տալիս է իր համաձայնությունը, պայմանով, որպեսզի ուսումնարանը վերանվանվի թեմական դպրոց և քաղաքն իր վրա վերցնի դպրոցի հոգսերն ու տնօրինությունը: Նոր Նախիջևանի քաղաքային խորհրդարանը գոհունակությամբ ընդունում է կաթողիկոսի առաջարկը: Հաջորդ տարում /1874/ կաթողիկոսի կոնդակով թույլատրվում է Նոր Նախիջևանում բացել ծրագրված դպրոցը, դրան հանձնելով խալիբյան ուսումնարանի շենքը, կահկարասիքը և տպարանը[46]:

Նոր Նախիջևանում համապատասխան աշխատանքներ է տարվում դպրոցի բացման ուղղությամբ: Անգամ հաստատվում է դպրոցի հոգաբարձությունը, նշանակվում տեսուչը և որոշվում 1875թ. կատարել դպրոցի բացումը: Սակայն Եկատերինոսլավի նահանգապետ Ի. Դուբնովոն արգելում է.

[46] ՀԱԱ, ֆ 10, ց 1, գ. 19, թ. 9:

պատճառաբանելով, որ չկա բարձրագույն իշխանության կողմից հաստատված կանոնադրություն: Գևորգ Դ. կաթողիկոսը ջիմում է բարձրագույն ատյաններ դպրոցի կանոնադրությունը հաստատելու համար: Միաժամանակ հոգաբարձությանը առաջարկում է բացել ուսումնական այդ հաստատությունը որպես հոգևոր դպրոց: Կարճ ժամանակում բացվում է Նոր Նախիջևանի հոգևոր դպրոցը, որն ունեցավ ընդամենը հինգ տարվա կյանք[47]:

Ի վերջո 1880թ. Ալեքսանդր Ի կայսրը հաստատում է թեմական դպրոցի կանոնադրությունը: Հաջորդ տարում կատարվում է դպրոցի բացումը: Նոր Նախիջևանում բարձրորակ դպրոց բացելու գործադրած ջանքերի ժամանակ մշտապես բանավեճ ու տարակարծություններ էր առաջանում ապագա դպրոցի բնույթի, ուղղության հարցի շուրջ: Բնակչության մի մասը նպատակահարմար էր գտնում բացել պետական ռեալական ուսումնարան, իսկ թեմականի փոխարեն ունենալ հոգևոր դպրոց: Լուսավորության նախարար Դ.Տոլստոյը Նոր Նախիջևանում եղած ժամանակ տվել էր իր համաձայնությունը ռեալական ուսումնարանում հայոց լեզվի և կրոնի ուսուցում մտցնելու մասին, ինչպես այդ արվել էր Լազարյան ճեմարանում[48]: Բնակչության մյուս ավելի մեծ մասը թեմական դպրոց ունենալու տեսակետն էր պաշտպանում: Նրանք էական նշանակություն չէին տալիս այն հանգամանքին, որ թեմական դպրոցն ավարտողները չեն կարող անմիջապես համալսարան ընդունվել: Այդ վեճերն ու տարակարծությունները այնքան ուժեղ էին, որ դրանց արձագանքեցին նշանավոր հայկական թերթերը /«Մշակ», «Մեղու», «Հայաստան»/ և շարունակվեցին անգամ թեմականի կանոնադրությունը հաստատելուց հետո: Մանավանդ որ կանոնադրությունում հստակ չէր ձևակերպված դպրոցի նպատակները: Հպանցիկ նշվում էր, որ դպրոցում միջնակարգ ուսումնարանների ծրագրով ավանդվելու են ընդհանուր գիտություններ՝ բարո-

---

[47] Նույն տեղում, թ. 10:
[48] «Մշակ», 1876, նո 16:

յական և մասավոր կրթության արդասավոր քաղաքացիներ պատրաստելու համար:

Սակայն շուտով, թեմական դպրոցի հենց առաջին տարիների գործունեությունը հիմք դարձավ մարելու այդ հակասությունները: Կյանքի պահանջներին համապատասխան, ինչպես Անդրկովկասի այնպես էլ հատկապես Նոր Նախիջևանի թեմական դպրոցը գործնականում այլ բնույթ ստացավ: Այն ասոիճանաբար դարձավ բազմակողմանի կրթություն տվող, աշխարհիկ սկզբունքներով առաջնորդվող միջնակարգ մի հաստատություն:

Թեմական դպրոցը, փաստորեն, ողղություն էր տալիս, Դոնի ու Հյուսիսային Կովկասի հայության կրթության գործին, ինչ որ չափով նաև մասավոր կյանքին: Նրա սանները կյանքի լայն ասպարեզ էին դուրս գալիս և շատ քչերն էին հոգևոր կոչում ընդունում: Այն դարձավ կյանքի հրատապ հարցերին արձագանքող, հասարակական – քաղաքական իրադարձությունների հետ կապված ուսումնական հաստատություն:

Դպրոցը լայն ու համակողմանի դիտելիքներ էր տալիս սաներին: Այստեղ ավանդվում էին կրոն /հին և նոր կտակարան, հայ եկեղեցու պատմություն, աստվածաբանություն/, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն լեզուներ, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն /հայոց, ռուսաց, ընդհանուր/ մանկավարժություն, հոգեբանություն, տրամաբանություն, բնագիտություն, գծագրություն, գեղագրություն, երգեցողություն, մարմնամարզություն[49]:

Դպրոցի առաջին տեսուչն էր Ա.Բահաթրյանը: Նրա մահից հետո այդ պաշտոնը վարում էր լեզվաբան Զարիխյանը, իսկ 1903 թվականից երկար տարիներ՝ վաստակաշատ բանասեր ու մանկավարժ Ե.Շահազիզը: Սկզբնական շրջանում դպրոցն ուներ 152 աշակերտ, իսկ 20-րդ դարի սկզբներին այդ թիվը հասավ 250-ի, որի փոքր մասը ձրիավարժ աշակերտներն էին:

---

[49] ՀԱԱ, ֆ. 10. ց. 1, գ. 19, թ. 7:

Կանոնադրության համաձայն սեմինարիան պահվելու էր թեմի եկեղեցիների, խալիբյան ուսումնարանի շենքի արդյունքներից և աշակերտների ուսման վարձից գոյացող միջոցներով: Դպրոցի հիմնադրման ժամանակ թեմական Մակար արքեպիսկոպոսը սահմանեց թեմի 38 եկեղեցիների ու վանքերի տարեկան վճարելիք գումարը, որը կազմում էր 4130 ռուբլի[50]: Հենց այդ ժամանակ պարզվեց, որ այդ աղբյուրներից գոյացող գումարը չի բավարարում դպրոցի պահանջները: Պակասը լրացնելու համար հիմնական աղբյուր դարձան քաղաքային վարչության հատկացումները և նվիրատվությունները:

Թեմական այս դպրոցի մասին հատուկ պատկերացում կազմելու համար ծանոթանանք 1890/91 ուսումնական տարվա, արդեն տասնամյա անցյալ ունեցող ուսումնարանի տվյալներին: Դպրոցն ուներ 17 որակյալ ուսուցիչ և իր բժիշկը: Տարվա ընթացքում գումարվել էր 8 մանկավարժական ժողով: Ուսումնական խնդիրներից բացի մանկավարժական ժողովը անդրադարձել ու հանգամանորեն քննարկել էր տարբեր առարկաների համար կազմված նոր դասագրքերի պիտանի լինելու հարցը: Հայոց պատմության առաջարկված դասագիրքը փոխարինվել էր Ս.Պալասանյանի հեղինակած դրքով: Դպրոցն ուներ գրադարան, որը կազմակերպվել էր ուսումնարանի բացման ժամանակ՝ հանգանակված գումարներով: 1891թ. գրադարանն արդեն ուներ 900 կտոր գիրք, իսկ դպրոցը՝ լավ կահավորված ֆիզիկայի կաբինետ[51]:

Աշակերտների թիվը հասնում էր 210-ի, որոնցից 70-80 սովորողներ ձրիավարժ էին: Դրանցից 32 սաներ պահվում էին բարեգործական ընկերության միջոցներով: Սեմինարիան տարեկան ավարտում էր 4 – 6 աշակերտ: 1889/90 ուսումնական տարում ավարտել էին 4 հոգի: Նրանցից Հ.Քեչեկյանը ուսումը շարունակեց արտասահմանում բժշկական մասնագիտության գծով և ապագայում եղավ Երևանի բժշկական ինս-

---

[50] Նույն տեղում, թ. 6:
[51] «Արարատ», 1892, էջ 32-37, 46:

տիտուտի հիմնադիրներից: Նշանավոր գործիչներ դարձան նաև մյուս շրջանավարտները՝ Հ.Բեգելյանը, Ռ.Բերբելյանը և Ռ.Ծուռվիղյանը[52]:

Դպրոցի տարեկան եկամուտը հասել է 30970 ռուբլու, իսկ ծախսերը՝ 18437 ռուբլու: Եկամուտներից ավելացած 12533ռ. գումարը հոգաբարձությունը մտադիր էր օգտագործել դպրոցի շենքն ընդարձակելու նպատակով: Այդ տարում եկամուտներն ավելանում են ևս մեկ այլ աղբյուրից: Սեմինարիայի հիմնադրման օրերին Խաչերես Դյաչկովը կտակել էր 100 հազար ռուբլի գումար, իր մահվանից հետո այդ դրամագլխի տոկոսներով իր անվան թոշակառու աշակերտներ պահելու նպատակով: 1891թ. նա մահանում է և Մոսկվայի բանկում պահվող նրա կտակած գումարի 5000 ռուբլու հասնող տոկոսներն անցնում են դպրոցին[53]:

Սովորողների քանակի ավելացմանը հիմնականում խանգարում էր այն հանգամանքը, որ թեմական դպրոցի շրջանավարտները չէին օգտվում պետական զիմնազիա ավարտողների իրավունքներից: Նրանք իրավուն չունեին առանց քննության համալսարան ընդունվելու, այն պատճառաբանությամբ թե այստեղ չեն ավանդվում դասական լեզուներ՝ լատիներեն, հունարեն: Գիմնազիաների ծրագրերին համահունչ լինելու նպատակով թեմական դպրոցում մտցված էր լատիներեն լեզու: Չնայած դրան բարձրագույն ատյանները համառորեն թեմականին նման արտոնություն չէին տալիս, այդ պատճառով էլ շատերը դերադասում էին ուսանել զիմնազիաներում:

Այդուհանդերձ լավ պատրաստություն ստանալու շնորհիվ թեմական դպրոցի շրջանավարտների մի մասը կարողանում էր հաջող քննություններ հանձնել և կրթությունը շարունակել արտասահմանի կամ Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բավական է նշել, որ 1887 թվականից հետո թեմական դպրոցի 190 շրջանավարտ-

---

[52] Նույն տեղում, էջ 38-39:
[53] «Նոր դար», 1891, Ն0. 25:

ներից 58 հոգի կամ 30 տոկոսն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն[54]:

Դպրոցի շրջանավարտները տեղում, Ղզլարում, Մոզդոկում, Արմավիրում, Հյուսիսային Կովկասի այլ բնակավայրերում, Ղրիմի հայկական բնակավայրերում և այլուր մանկավարժական արդյունավետ աշխատանք էին կատարում: Նրանց մի մասը կրթություն ստանալով կայսրության կենտրոնական քաղաքներում վերադառնում էին հայրենիք և լուսավորական ու հասարակական բեղմնավոր գործունեություն ծավալում: Դպրոցի շրջանավարտները սերտ կապերի մեջ էին իրենց հարազատ կրթօջախի հետ: Այդ տեսակետից բնորոշ է թեմականի նախկին սան, երդվյալ հավատարմատարի օգնական Դ. Զուբարյանի վարմունքը: Նա դպրոցի տեսուչ Ե.Շահազիզին է ուղարկում 3000 ռուբլի, որով դպրոցին երախտագիտությամբ փոխհատուցում էր իր 6-ամյա ուսուցման պարտքը:

«Դեռ աշակերտության նստարանից,- գրում էր նա,- ջերմ ցանկություն եմ ունեցել անպայման պարտահատույց լինել Ձեր խնամքին հանձնված դպրոցին, որի հետ մինչև այսօր կապված եմ մտքի և զգացմունքի ներքին թելերով... Օգտվելով այն նյութական հնարավորությունից, որ ներկայումս ստեղծվել է ինձ համար շտապում եմ գեթ համեստ չափով հատուցել պարտքս»[55]:

Նոր Նախիջևանի թեմական դպրոցում աշխատանքի անցան ճանաչված ու անվանի շատ մանկավարժներ, որոնք բեղմնավոր գործունեություն ծավալեցին մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Դպրոցը փաստորեն դարձել էր հարավային Ռուսաստանի հայկական շրջանների հայապահպանության, և կուլտուր – լուսավորական կյանքի ջահակիրը:

* * *

---

[54] ՀԱԱ, ֆ 10, ց 1, գ. 114, թ. 25:
[55] Նույն տեղում, գ. 130, թ. 2:

Ուման ոլորտում ինչպես Հայաստանում այնպես էլ ռուսական գաղթավայրերում ցարական իշխանության վարած քաղաքականության հետևանքով լուրջ դժվարություններ առաջացան: Ցարական մեծապետական պաշտոնյաների վարած հակազգային դիրքորոշման հետևանքով 19-րդ դ. վերջերին և 20-րդ դարի սկզբներին ուժգին ճնշումներ, հալածանքներ սկսվեցին հայկական ուսումնական հաստատությունների նկատմամբ:

1885թ. փակվեցին հայկական եկեղեցական – ծխական դպրոցների մեծագույն մասը: Գոյություն ունեցող 346 հայկական եկեղեցական դպրոցներից փակվեցին շուրջ 290-ը: Մի փոքր դադարից հետո հալածանքները ավելի ուժգին ձևով կրկնվեցին 90-ական թվականներին, մասնավորապես 1897թ. հունիսի եկեղեցիներին, վանքերին կից ուսումնարանների մասին օրենքով: Անհրաժեշտ է նշել, որ կայսրության հայկական շրջաններում /գաղութներում/ օրենքն ավելի մեղմ ձևով էր իրագործվում: Նախ չէր կիրառվում Մոսկվայի, Պետերբուրգի ուսումնարանների և թեմական դպրոցի նկատմամբ: Դրանից զատ փակված դպրոցների քանակն ավելի նվազ էր: 1885թ. եթե վիրահայոց թեմում փակվեց 79 դպրոց, իսկ Երևանի թեմում 102, ապա Աստրախանի թեմում ընդամենը 14 դպրոց[56]:

Առավել խիստ ու դաժան էր 1903թ. հունիսի 12-ի հայ եկեղեցու և ուսումնարանների ամբողջ գույքը և միջոցները պետականացնելու վերաբերյալ օրենքը: Հանրությանը, երբ հայտնի դարձավ այդ օրենքը հայ մտավորականության և հասարակական գրեթե բոլոր խավերում դժգոհության, ընդդիմության լայն շարժում սկսվեց: Ամենուրեք հավաքներ, ժողովներ, ցույցեր էին կազմակերպում, պահանջում չեղարկվել հակահայկական այդ օրենքին: Գործը հասավ նրան, որ կաթողիկոս Խրիմյան Հայրիկը դիմեց կայսրին եկեղեցու գույքի տնօրինումը նախկին վիճակում թողնելու համար:

---

[56] Վ.Երկանյան, նշված աշխատությունը, էջ 145-146:

Ընդդիմության ալիք բարձրացավ նաև ռուսահայ գլխավոր հայաշատ կենտրոններում, որոնց մասին քիչ նյութեր են պահպանվել: Պատկերացում կազմելու համար թեկուզ թռուցիկ ծանոթանանք Նոր Նախիջևանում և Սուրբ Խաչ վանքում կատարված դեպքերին: Տեղի իշխանության ներկայացուցիչները սեպտեմբեր ամսին բոլոր հոգևորականներին հրավիրում են ժողովի, ծանոթացնում 1903թ. հուլիսի 12-ի բարձրագույն հրամանին և հորդորում հոժարակամ հանձնել եկեղեցիների ու վանքերի շարժական ու անշարժ ունեցվածքը: Մի քանի օր անց Սուրբ Խաչ է գալիս Նոր Նախիջևանի ոստիկանության լիազորը և պահանջում վանքի եկամուտների վավերագրերը, բայց դիմադրության հանդիպելով հետ է վերադառնում: Դրանից հետո բարձրագույն հրամանը իրագործելու նպատակով վանք են գալիս ստեղծված հանձնաժողովի 3 անդամները՝ Դոնի զորքերի ատամանի տեղակալ Դորբինը, Ռոստով քաղաքի ոստիկանապետը և Նոր Նախիջևանի լիազոր ոստիկանը: Նրանք զննում են վանքը, օժանդակ շինությունները, պարտեզը, ամառանոցը, ծանոթանում եկամուտների մատյանին: Վանքին են թողնում միայն շենքի բակը և երկու հարակից տնակ: Պետականացնում են վանքի 450 դես. վարելահողերը, 10 դես. հողամաս գրաղեցնող բանջարանոցը, 8 դես. տարածք ունեցող պարտեզը և քարհանքերը: Ապա Ռոստով են հրավիրում վանքի վարելահողերի և ունեցվածքի վարձակալներին և խստորեն պատվիրում վարձակալական վճարը այսուհետ մուծել պետական գանձարան:

Նման խստապահանջ միջոցառումներից հետո էլ վանքում այդ հրամանի վերջնական իրագործումը հաջող ու խաղաղ չի ընթացել: Կատարվել են այնպիսի անհամաձայնություններ, դիմադրություն, որ իշխանությունները վանքի ժառանգավորաց դպրոցի ուսուցիչներ Վահան Տեր-Գրիգորյանին և Նահապետ վարդապետ Նահապետյանին արտաքսել են: Տեղի հայ հասարակությունը անհանգստացած էր և թեմական դպրոցում հուզումներ եղան այն առիթով, որ դպրոցին պատկանող Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանի երկհարկանի շենքը նույնպես պետականացնում էին: Նոր Նա-

*խիջևանում ևս այնպիսի ուժգին ընդվզումներ եղան, որ վերադաս իշխանությունները անհրաժեշտ համարեցին աքսորել տեղի հոգևոր պետին*[57]:

*Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը հնարավորություն չտվեց ցարիզմին վերջնականապես իրականացնելու հայկական եկեղեցական գույքը բռնագրավելու և դպրոցները փակելու. 1903թ. հունիսի 12-ի օրենքը: Ժողովրդական հուզումները հանդարտացնելու և խաղաղ իրավիճակը վերականգնելու նպատակով 1905թ. օգոստոսի 1-ի կայսերական հրամանագրով վերացվեց 1903թ. օրենքը: Եկեղեցուն վերադարձվեց բռնագրավված գույքն ու կապիտալը և թույլատրեց վերաբացել եկեղեցական – ծխական դպրոցները: Շուտով ինչպես Կովկասի փոխարքայությունում այնպես էլ Ռուսաստանում բացվեցին փակված դպրոցները:*

*Սակայն, եթե Անդրկովկասի ծխական դպրոցներում վերականգնվեց նախկին դրությունը, դրանք կրկին անցան հոգևոր իշխանության հովանավորության տակ, ապա ռուս-հայ շրջանների նկատմամբ այլ քաղաքականություն տարվեց: Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի և Աստրախանի թեմերի ծխական դպրոցները մնացին լուսավորության նախարարության ենթակայության տակ: Այդ դպրոցները նույնացվեցին պետական տարրական դպրոցների հետ: Տարբերությունն միայն այն էր, որ հայկական դպրոցներում երկու առարկան՝ կրոնը և հայոց լեզուն ավանդվում էր մայրենի լեզվով:*

*Աղատամտական, ժողովրդագրական դաղափարներով տարված ուսանող - երիտասարդությունն, այդ թվում դպրոցների բարձր դասարանների աշակերտությունը հանդես էր գալիս հասարակական այլ անընդունելի, խարազանելի երևույթների դեմ: Նրանք ընդվզում, պայքար էին մղում առաջին հերթին ուսման գործընթացում տիրող քարացած, բյուրոկրատական մեթոդների դեմ:*

---

[57] Վ.Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1985, էջ 234-236:

Այդ նույն Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական դպրոցի աշակերտներից մեկի թաղման ժամանակ չորրորդ դասարանի աշակերտ Գ.Պողոսյանը դամբանական խոսքում խիստ քննադատում է դպրոցում տիրող ռեժիմը և դրա վրա հրավիրում հասարակության ուշադրությունը: Մանկավարժական խորհրդի և հոգաբարձության որոշմամբ նա դպրոցից հեռացվում է: Բարձր դասարանի աշակերտները, ի պաշտպանություն դասընկերոջ, դասադուլ են հայտարարում: Դպրոցի տնօրինությունը նրանց հեռացնում է դպրոցից և պահանջում ընդունվելու համար խոստովանեն իրենց մեղքերը և անհատական դիմումներ ներկայացնեն: Աշակերտները մերժում են այդ պահանջը: Նրանք ապօրինի են համարում Պողոսյանին հեռացնելը և պահանջում թույլատրել իրենց առանձին կազմակերպություն ունենալ և թերթ հրատարակել[58]:

Ծխականների ժողովը անդրադառնում է այդ հարցին և չի բավարարում աշակերտների պահանջները: Ի Պատասխան այդ քայլի աշակերտ Մ.Դեմիրյանը հրապարակում է հեռացված աշակերտների վճիռը՝ հրաժարվում են դպրոց հաճախել, եթե չընդունվեն բոլոր հեռացվածները: Նա միաժամանակ աշակերտության անունից դիմում է հասարակայնությանը պայքարելու մարդկային տարրական իրավունքները դպրոցի վարչության կողմից ոտնահարելու դեմ:

Ռուսական և հայկական մամուլը սկսում է լայնորեն լուսաբանել թեմական դպրոցի դեպքերը: Հայկական շատ կենտրոններից արձագանքում և իրենց վերաբերմունքն են դրսևորում հասարակական բնույթ ստացած այդ երևույթին: Խարկովից մի շարք մտավորականներ, Ղզլար քաղաքի հայկական դպրոցի մանկավարժական խորհուրդը, թեմականի նախկին սաներ բողոքում են կատարված կամայականությունների դեմ: Գևորգյան ճեմարանի ուսուցիչ Հ.Գենջյանը դպրոցի տնօրինությանը հասցեագրած բաց նամակում գրում

[58] «Մշակ», 1906, Ոո 273:

*Լր. «Ամբողջ էությամբ բողոքում եմ ձեր բռնության դեմ և պահանջում ամենախիստ հասարակական դատաստան»*[59]:

*Համերաշխելով Նոր Նախիջևանի աշակերտության հետ իրենց բողոքի ձայնն են բարձրացնում Երևանի թեմական դպրոցի աշակերտները: Հեռացված աշակերտների անունից Ս.Համալյանը պատասխանում է Երևանի թեմակիցներին: «Ձեր ընկերական անհապաղ օգնությունը և բարոյական խրախուսանքները,- գրում էր նա,- մեզ ավելի ևս ամրացրեց մեր դպրոցական բյուրոկրատական վարչության հայտարարած կռվի մեջ ու ավելի ևս հաստատեց մեր այն հույսը, որ ճշմարտությունը հալածող և ամեն մի սուրբ գաղափար ու մաքուր զգացմունք ոտնատակ անող վարչությունը կտապալվի»*[60]:

*Հայ հասարակության ակտիվ միջամտությունից ահաբեկված Մուշեղ վարդապետը հոգաբարձության անունից զիջումներ կատարելով փորձում էր մեղմել դրությունը, կանխել ստեղծված հակասությունների հետագա սրումը, բայց ապարդյուն:*

*Ի վերջո այդ դեպքերին միջամտում են գեներալ - նահանգապետերը և քաղաքապետի ու ոստիկանության միջոցով կարողանում է վերջ տալ մեծ աղմուկ հանած աշակերտական այդ շարժումներին:*

*Ռուսաստանի տարածքում գտնվող հայկական ուսումնական հաստատություններին ազգային նկարագրից զրկելու ցարական իշխանության վարած մեծապետական քաղաքականությունը նկատելի հաջողությունների չէր հասնում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ ռուսահայ ազգային կյանքը ամբողջությամբ, կրթական ոլորտը մասնավորապես կապված էր Մայր հայրենիքի հետ: Այդ կապերի շնորհիվ արգասավորվում, նոր լիցքեր էր ստանում հայկական դաղթավայրերի ազգային կյանքը:*

---

[59] «Նոր կյանք», 1906, Ռո. 22,24:
[60] Նույն տեղում, Ռո 25:

Մայր հայրենիքի հետ ռուսահայ գաղթավայրերի կապերը իրականանում էին համակողմանի: Մի կողմից գրավոր խոսքի՝ հրատարակվող գրականության, պարբերական մամուլի, դասագրքերի միջոցով: Մյուս կողմից կենդանի շփումների միջոցով: Նման շփումները իրականանում էին հոբելյանական հանդեսների, մտավորականության ճանաչված դեմքերի փոխայցելությունների, առևտրատնտեսական կապերի և այլ ձևերով: Ամենայն հայոց կաթողիկոսները ռուսաց մայրաքաղաք մեկնելու առիթով մշտապես այցելում էին հայաշատ բնակավայրերը, ծանոթանում տեղի հայության դրությանը, հետաքրքրվում ուսումնամշակութային կյանքով:

Հայրենի երկրի հետ կենդանի կապեր էին պահպանվում նաև ռուսահայերի մեջ արմատավորված կրոնական մի սովորությամբ: Նրանց մեջ տարածված էր Էջմիածին, Երուսաղեմ և Մշո Ս.Կարապետ վանք ուխտագնացության գնալը: Ուխտագնացությունը տևում էր մեկ ամսից ավելի ժամանակ: Այն պայմանավորված էր և կյանքի էր կոչվում ոչ այնքան կրոնական մոլեռանդությամբ, որքան Էջմիածնի որպես համահայկական միակ կազմակերպության շուրջը համախմբվելու, հայրենասիրական զգացմունքներ առաջացնելու: Մայր հայրենիքից արգասավորվելու մտահոգությամբ: «Ամեն տարի ամառվա ընթացքում,- գրում է ճանաչված մտավորական Խ.Փոքչեյանը,- հայ երիտասարդությունը խոշոր խմբերով, ձիերի վրա նստած, ուխտ է գնացել Մշո սուրբ Կարապետի վանքը, ճանապարհին այցելել է Հայաստանի տեսարժան վայրերը և անպատճառ իրենց մայրենի Անիի ավերակները»[61]:

Երկաթուղիների և առհասարակ հաղորդակցության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց ուսանող երիտասարդության, մշակույթի և այլ ասպարեզների մտավոր գործիչների փոխայցելություններին:

19-րդ դարի վերջերից սովորություն էր դարձել դպրոցների ամառային արձակուրդներին բարձր դասարանի աշա-

---

[61] Խ.Փորքչյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան 1965, էջ 66:

կերտների ուղևորությունների կազմակերպումը դեպի Հայաստան: Ուսումնական հաստատությունների ճանաչված մանկավարժները լավ էին հասկանում այդ այցելությունների նշանակությունը: Թեմական դպրոցի տեսուչ Ե.Շահազիզը հետևյալ ձևով է հիմնավորում նման էքսկուրսիաներ կազմակերպելու անհրաժեշտությունը. «Նկատված է, - գրում է նա,- որ զլբանոցիս աշակերտները Հայրենիքից հեռու, օտարության մեջ ծնված և սնված լինելով,վերացական մի բան են համարում իրենց սովորածները և լավ չեն կարողանում տպավորել իրենց սրտերում Մայր Հայրենիքին վերաբերող ամենաէական և իրական տեղեկությունները:

Ամեն բան իրենց աչքով տեսնելու հնարավորություն տալու, ամեն բան նրանց համար շոշափելի դարձնելու նպատակով շատ ժամանակ դեռ առաջ միտք է հղացել պարբերաբար կազմելու աշակերտական ճամփորդություններ դեպի Հայրենիք, դեպի նրա նվիրական տեղերը, բայց նյութական միջոցների սղության պատճառով դժբախտաբար չէր իրագործվել այդ լավ ու օգտավետ միտքը»[62]:

Թեմական դպրոցի մի խումբ աշակերտներ 1909թ. այցելում են Հայաստան: Երկու տարի անց ուսուցիչներ Մելիք-Օհանջանյանի և Զաթալբաշյանի գլխավորությամբ թեմականի 22 աշակերտներ մեկնում են Անդրկովկաս: Նրանք անցնում են Թիֆլիս – Սանահին – Հաղպատ - Անի ուղեգծով: Միջնադարյան Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Անիում հանդիպում են ունենում հնագիտական պեղումներ կատարող արշավախմբի հետ: Լսում են արշավախմբի ղեկավար պրոֆ. Ն.Մառի բացատրությունները և Ալեքսանդրապոլ - Էջմիածին - Երևան – Սևան – Թիֆլիս ուղերթով վերադառնում: Ուղևորություն են կատարում նաև Նոր Նախիջևանի իգական գիմնազիայի սանուհիները և ուրիշ զլբոցների աշակերտներ[63]:

---

[62] ՀԱԱ, ֆ. 55, ց. 1, գ. 1, թ. 73:
[63] «Մեր ծայնը», 1908, ևն. 30, «գաղութ», 1914, ևն. 19:

Համանման էքսկուրսիաներ էին կազմակերպում Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի աշակերտների համար: Դեպի հայրենիք տարբեր խմբերով ուղևորություններ էին կազմակերպում նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողները:

* * *

Դպրոցների բարեհաջող գործունեության հիմնական պայմաններից գլխավորը նյութական միջոցների խնդիրն էր: Ցինանսական բավարար միջոցներ ունեցող կրթօջախները հնարավորություն էին ստանում բարձրորակ մանկավարժներ հրավիրել, ուսման բարեկարգ պայմաններ ստեղծել, գիշերօթիկ սաներ պահել: Դրան հակառակ քիչ չեն նաև այն դեպքերը, երբ դպրոցը փակվում էր ֆինանսական հնարավորություններ չունենալու պատճառով:

Ռուսահայ դպրոցները Հայաստանի և Անդրկովկասի հայկական ուսումնական հաստատությունների համեմատությամբ ֆինանսական ավելի բարվոք վիճակում էին: Այնտեղի բնակչությունը ապրում էր ավելի բարեկեցիկ կյանքով: Այդ պարագան, անշուշտ, բարերար ներգործություն էր ունենում ուսումնա - լուսավորական ասպարեզի վրա: Ուրիշ խոսքով ռուսահայ շրջանները հնարավորություն ունեին ավելի շատ միջոցներ հատկացնել մանուկների ուսման գործին: Եվ նրանք այդ հնարավորությունները իրացնում, գործի էին վերածում: Նման հարցադրումն ոչ թե հենվում է ընդհանուր, ենթադրությունների այլ փաստական կոնկրետ տվյալների վրա: 1882թ. Անդրկովկասի այդ թվում և Հայաստանի հայկական դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 12,321 – ի, որոնց վրա ծախսվում էր տարեկան 328 339 ռուբլի գումար: Ռուսական կայսրության տարածքի հայկական դպրոցների աշակերտների թիվը 4557 էր, իսկ դպրոցների տարեկան ծախսը կազմում էր 234, 560 ռուբլի[64]: Այդ տվյալների համա-

[64] Տես Վ.Երկանյան, նույն աշխատությունը, էջ 123:

ձայն Անդրկովկասի պայմաններում մեկ աշակերտի վրա տարեկան ծախսվում էր ընդամենը 28 ռուբլի, իսկ ռուսահայ դպրոցներում 52 ռուբլի. այսինքն գրեթե կրկնակի ավելի մեծ գումար:

Այս խնդիրների համակարգում չպետք է անտեսել նաև այն հանգամանքն, որ համատարած ռուսական միջավայրում ազգային ինքնությունն ու նկարագիրը պահպանելու հիմնական գրավականը մանուկներին ազգային կրթության տալը, ազգային ոգով դաստիարակելն էր: Այդ լավ էին հասկանում ռուսահայ շրջաններում և միջոցներ ու ջանքեր չէին խնայում այդ ուղղությամբ:

Հայտնի է, որ ուսումնական գործին մեծ նպաստ էին բերում և դպրոցներին սատար կանգնում բարեգործական կազմակերպությունները: Հայաստանի և Անդրկովկասի բարեգործական ընկերությունները իրական կյանքի առաջադրած պահանջներից ելնելով օգնություն էին ցույց տալիս ընչազուրկներին, արևմտահայ փախստականներին, զբաղվում աղքատախնամ գործունեությամբ: Ուսումնական գործընթացին նպաստելը կազմում էր նրանց առաջ ծառացած խնդիրների միայն մի մասը: Ռուսահայ շրջաններում պատկերն այլ էր, որտեղ բարեգործական ընկերությունները ծնունդ էին առնում հատկապես ուսումնական նպատակների համար:

Անվանի մանկավարժ լիբերալ գործիչ, Ստեփանոս Նազարյանը զարգացող բուրժուական հարաբերություններում ռուսահայությանը կրթելու, լուսավորելու հատուկ հայեցակարգ էր մշակել: Իր խմբագրած «Հյուսիսափայլ» ամսագրում հանդես եկավ «Առաջարկություն» ծրագրային հոդվածով: Նա ուշադրություն հրավիրեց այն պարագայի վրա, որ հայերը զրկված են լուսավորությանը զորավիգ լինող պետությունից, բնակվում են ցրված, աչքի են ընկնում անձնապաշտական գործունեությամբ, հաճախ հնարավորություն չեն ունենում ուսում ստանալու: Ազգի ապագան նրա լուսավորության մեջ տեսնող գործիչը առաջարկում էր միջոցներ հավաքել և Ռուսաստանում մի ընդհանուր ընկերություն ստեղծել:

Այդ ընկերությունը կոչված էր լինելու տնօրինել կարիքավոր պատանիներին ուսման տալու, չնորհալի երիտասարդներին արտասահման կրթության գործուղելու, հայկական հրատարակություններ հիմնելու, ինչպես նաև բարվոքելու հայերի նյութական ու բարոյական կյանքը[65]: Նա գրեց Նոր Նախիջևանի բարեգործական ընկերության կանոնադրությունը, որը շուտով 1866 թվին հաստատվեց կառավարության կողմից:

Բարեգործական այդ ընկերությունը կարճ ժամանակում դարձավ կենսունակ ու ճանաչված հաստատություններից մեկը և ունեցավ արդյունավետ գործունեություն: Կարիքավոր երեխաներին կրթություն տալուց զատ, որը կլանում էր հիմնական միջոցները, ընկերությունը մասնակցում էր նաև բարեգործական ձեռնարկումների: 1880թ. ընկերությունը իր միջոցներով պահում էր 54 սան: Նրանցից հոգևոր սեմինարիայում սովորում էին 29, Հռիփսիմյան իգական դպրոցում 11, իգական պրոգիմնազիայում 9, արհեստավորական դպրոցում 1, Լազարյան ճեմարանում 2, Պետերբուրգի արվեստագիտական դպրոցում և Մոսկվայի համալսարանում մեկական հոգի[66]: Իսկ 1910թ. նրա միջոցներով ուսանում էին 114 պատանիներ ու երիտասարդներ: Իր գործունեության 25 տարիների ընթացքում ընկերությունը Ռուսաստանի և արտասահմանի ուսումնական հաստատություններում կրթության էր տվել 619 սանների[67]: Ավելի համեստ դեր ուներ «Մարդասիրական ընկերությունը», որն իր միջոցները ծախսում էր Ս.խաչ վանքի ժառանգավորաց դպրոցը պահպանելու վրա:

Մի խումբ կանանց և օրիորդների նախաձեռնությամբ 1882թ. ստեղծվում է «Հայուհյաց խնամարար ընկերությունը», որը նպատակ ուներ զբաղվել չքավոր աղջիկների կրթության ու դաստիարակության գործերով: Նկատի էր առնվում նաև այն հանգամանքը, որ Նոր Նախիջևանում կա-

---

[65] «Հյուսիսափայլ», 1862, Ն0. 7, էջ 43-53:
[66] «Նոր դար», 1888, Ն0. 99:
[67] ՀԱԱ, ֆ 54, ց 1, գ. 210, թ. 33:

յին արական սեռի բաղում դպրոցներ, իսկ իգական սեռի համար միայն Գոգոյան ուսումնարանը և մեկ պրոգիմնազիա: Ընկերությունը իր վրա էր վերցնում նյութական միջոցների մեծ կարոտություն ունեցող Հռիփսիմյաց օրիորդաց դպրոցի խնամատարությունը:

Բարեգործական մյուս կազմակերպությունների արդյունավետ գործունեությանը հարկ չկա անդրադառնալու, քանի որ բերված օրինակները լիովին ներկայացնում են իրական պատկերը:

Ուսումնակրթական ոլորտին մեծ նպաստ բերեց, կարելի է ասել անտեսված կամ հիմնավոր չուսումնասիրված և գրականության մեջ լուսաբանում չգտած կարևոր մի կազմակերպություն: Այդ Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների խորհուրդն էր: Ռուսաստանի հայկական գաղութների ինքնավարությունը մարմնավորում էին, ինչպես նշվեց, մագիստրատները կամ ռաթհաուզները, որոնք ճանաչվում էին պետության կողմից: Կայսրության մայրաքաղաքների Մոսկվայի և Պետերբուրգի հայ բնակչությունը այնքան փոքրաքանակ էր, որ նրանց չվերապահվեց ինքնավար այդպիսի կազմակերպություններ ունենալու իրավունք:

Այդուհանդերձ տեղի թեկուզև շատ փոքրաքանակ հայ բնակիչներին ազգային ոգով համախմբելու համար անհրաժեշտ էր ունենալ համայնքային ինչ որ մի օրգան: Եկեղեցին էր մնում հայությանը միավորող և հայրենիքի հետ կապող միակ կազմակերպությունը:

Լաղարյանները իրենց կառուցած եկեղեցիների ամբողջ ունեցվածքը թողնում են եկեղեցիներին: 1804թ. բարձրագույն տայանների որոշմամբ եկեղեցիների կառավարումը տրվում է հայ հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը, որը գլխավորում էին Լաղարյանները: 1830թ., երբ Նիկոլայ Ա -ի հրամանով ստեղծվեց Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքները, որոնք մինչ այդ ենթարկվում էին Աստրախանի թեմին, ընդգրկվում են նորաստեղծ թեմի կազմում:

1837թ. Խաչատուր Լազարյանը առաջարկում է մայրաքաղաքների հայկական եկեղեցիների կառավարումը միավորել և դրանց միացնել Լազարյան ճեմարանը: Լազարյանները զառնում են եկեղեցիների և Լազարյան ճեմարանի հոգաբարձու: Խ.Լազարյանը գտնում էր, որ եկեղեցիների եկամուտները անհրաժեշտ է ծառայեցնել կրթության և գիտության զարգացմանը: Եվ փաստորեն այդպես էլ կատարվում էր:

Հետագայում, եկեղեցիների ունեցվածքը, հատկապես Պետերբուրգում, որը պատկառելի չափերի էր հասնում, կոլեկտիվ եղանակով տնօրինելու նպատակով 1883թ. Մինիստրների կոմիտեն հատուկ որոշում է ընդունում[68]: Այդ որոշման համաձայն երկու քաղաքներում եկեղեցական խորհուրդներ, որոնք միավորվում են մեկ ընդհանուր խորհրդի մեջ, որի անդամներն ընտրվում են ծխականների կողմից: Եկեղեցական խորհուրդների հոգաբարձուի պաշտոնը ժառանգաբար վերապահվում է Լազարյանների կամ Աբամելիք – Լազարյաններին:

Եկեղեցական խորհուրդը թեպետև անվանապես հոգևոր կազմակերպություն էր, բայց գլխավորվում էր աշխարհիկ անձնավորությունների կողմից: Այս կազմակերպության գործունեությունը այնքան բազմաբնույթ դարձավ և այնպիսի մեծ ծավալներ ընդունեց, որ նրա կազմում ընտրվում էին ճանաչված ու հեղինակավոր մտավորականներ: Տարբեր տարիներ խորհրդի կազմում ընտրվել են Ս. Հարությունյանը, Ք. Պատկանյանը, Կ. Էզովը, Ն. Ադոնցը, Գր. Խալաթյանը, Մ. Բարխուդարյանը և ուրիշ ճանաչված գործիչներ:

Եկեղեցական խորհուրդը դարձավ կրթությունը, լուսավորությունը հովանավորող հիմնական հաստատությունը, ունենալով գործունեության շատ ընդարձակ դաշտ: Խորհուրդը միջոցներ էր հատկացնում դպրոցական դասագրքեր, քարտեղներ կազմելուն, ինչպես և հայագիտական կարևոր հրատարակություններին, գիտական հետազոտություններին: Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի 399 ֆոնդի

---

[68] ՈՊՊԱ, ֆ. 821, ց. 7, գ. 181, թ.197 – 209:

հարուստ վավերագրերը հավաստում են եկեղեցական խորհրդի լուսավորական – կրթական բազմաբնույթ գործունեության մասին:

Այսպես օրինակ խորհուրդը գնում է Կ.Բասմաջյանի կազմած պատմական Հայաստանի քարտեզներից 100 օրինակ և ձրի առաքում հայկական դպրոցներին: Ցինանսավորում է Գյուտ քահանա Աղանյանդի «Դիվան հայոց պատմության» մատենաշարի, Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» հրատարակությունը, Ն.Մառի գլխավորած Անիի պեղումները և համանման այլ աշխատանքներ: Եկեղեցական խորհուրդը միաժամանակ օգնում էր զանազան ձեռնարկումների, որբանոցներին, փախստականներին, սակայն նրա հիմնական ուշադրությունը և միջոցները ուղղվել են կրթական գործին, մասնավորապես դպրոցական ուսուցմանը:

Ռուսահայ դպրոցների բնականոն ընթացքը պահելը խորհրդի հոգացողության մի մասն, այն էլ փոքր մասն էր կազմում: Նոր Նախիջևանի թեմական դպրոցին օրինակ տարեկան հատկացնում էր 750ռ., բայց որոշ տարիներ անհրաժեշտություն եղած պարագայում լրացուցիչ տալիս էր մինչև 2000ռ. դրամ /ՀԱԱ, ֆ 399, դ. 1058, թ. 1/: Նույն ձևով նպաստում էր մյուս ուսումնարանների աշխատանքներին:

Դրանից զատ եկեղեցական խորհուրդը հովանավորում էր նաև Անդրկովկասի դպրոցական ուսուցման գործընթացը: Հիշատակենք այս ուղղությամբ նրա կատարած լայնածավալ աշխատանքները բնութագրող որոշ փաստեր: Պետերբուրգի խորհուրդը, որի միջոցները Մոսկվայի համեմատությամբ շատ մեծ էին, այնքան բազմազան ու բազմաքանակ դիմումներ էր ստանում առանձին անհատներից, կազմակերպություններից նպաստ ստանալու համար, որ խորհրդի անդամ Ն.Ագոնցը հանդես է գալիս հատուկ ծրագրային առաջարկով: Նա գտնում էր, որ խորհուրդը ոչ թե ստացվող բազմաբնույթ դիմումների հիման վրա պետք է իր աշխատանքները կազմակերպի, այլ դպրոցական ուսուցման հարցում առաջնորդվի հատուկ ծրագրով: Նրա մոտեցմամբ ուշադրության կենտրոնում պետք է պահել առաջին հերթին գյուղական դպրոցնե-

ը: Անվանի պատմաբանը առանձնացնում է Արցախի, Սյունիքի, Գուգարքի 15 գավառներ և առաջարկում որպեսզի խորհուրդը յուրաքանչյուր գավառում նախապես մեկական այնպիսի դպրոց բացի, որ հնարավոր դառնա մտավոր ուժերը քաղաքից տեղափոխել այդ դպրոցները /ՀԱԱ, ֆ. 399, գ. 145, թ. 1 - 4/:

Ն.Ադոնցի առաջարկած ծրագիրը հավանություն է գտնում և սկսում է իրականացվել: Թիֆլիսի, Բաքվի բարեգործական ընկերություններն անմիջապես արձագանքում և այդ ձեռնարկմանը օժանդակելու իրենց պատրաստակամությունն են հայտնում: Բաքվի հայոց կուլտուրական միության կրթական մասնաճյուղի անունից միության նախագահ Կոստանդին Խատիսյանը 1908թ. հատուկ գրությամբ դիմում է Պետերբուրգի եկեղեցական խորհրդին: Նա հավանություն տալով գյուղերում դպրոցներ բացելու նախաձեռնությանը առաջարկում էր օգտագործել նաև գյուղերի հնարավորությունները և հովանավորների միջոցները դպրոցները պատշաճ մակարդակով պահելու համար: Անհրաժեշտ էր համարում գավառներում բացել նաև գյուղատնտեսական դպրոցներ և հավաստում իրենց միության աջակցությունը այդ ծրագրերը գործնականում իրականացնելու համար /ՀԱԱ, ֆ. 399, գ 145, թ. 11-13/:

Այդ նույն ժամանակ խորհրդին է դիմում նաև Թիֆլիսում գործող Կովկասյան հայոց բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյանը: Վերջինս խորհրդին տեղյակ է պահում, որ գավառներում դպրոցական ուսուցմանը նպաստելու նպատակով ընկերությունը մտավորականներից կազմել է մասնախումբ, որը արդյունավետ աշխատանք է կատարում: Նա հայտնում էր, որ դպրոցական ուսուցումը ծավալելու հարցում ամենամեծ խոչընդոտը ֆինանսական միջոցների բացակայությունն է: Արդեն երկրորդ տարին է ինչ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը Կովկասի գավառներում դպրոցները բացելու աշխատանքներ է տանում: Բարեգործական ընկերությունը մեծ հույսեր է կապում դրա հետ «ոչ միայն նկատի ունենալով, - գրում էր Ս.Հարությունյանը,-

Պետերբուրգի եկեղեցու միջոցների պատկառելի քանակը, որը դարձնում է նրան մի բացառիկ հիմնարկություն հայկական կյանքում, այլև աչքի առաջ ունենալով այն տրամադրությունը, որը տիրում է եկեղեցական խորհրդում» /ՀԱԱ, ֆ. 399, գ. 145, թ. 68/: Նա առաջարկում էր, որ եկեղեցական խորհրդի ծրագրերի գործնական կենսագործումը կատարվի բարեգործական ընկերության միջոցով:

Եկեղեցական խորհուրդը բարեգործական ընկերության միջոցով պահում էր 18 դյուղական դպրոցներ, իսկ Բաքվի կուլտուրական միության միջոցով՝ 20 – ից ավելի դպրոցներ: Դրանից զատ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում պահում էր «Լազարյանի» անվան 40 սան, որոնց համար ամեն կիսամյակ առաքում էր 8000 ռուբլի: Խորհուրդը նպաստ էր հատկացնում Շուշու Մարիամյան դպրոցին, Քութայիսի նահանգի, Ախալքալաքի, Էջմիածնի, Ելիզավետպոլի գավառների բազմաթիվ դպրոցների:

Եկեղեցական խորհրդի ուսումնական գործում լայն, համահայկական ընդգրկում ունենալը դրսևորվում է ոչ միայն ռուսական կայսրության մեջ այլ անգամ Թուրքիայի սահմաններում Արևմտյան Հայաստանում ծավալած աշխատանքներով: 1910թ. խորհուրդը նախաձեռնում է Մուշում կրթական հաստատություն հիմնել և այդ նպատակով 5000 ռուբլի է հատկացնում: Նա միաժամանակ 1000 - ական ռ. դումար է տրամադրում Մշո ս. Կարապետի, Աղթամարի, Վարագա վանքերի, Բաղեշի, Վանի կենտրոնական, Կարինի Սաննասարյան վարժարաններին: Ն.Մառի միջոցով, Վանի ռուսական կոնսուլի միջնորդությամբ նպաստ է առաքվում է Երամյան դպրոցին[69]: Արևմտյան Հայաստանից հոսող դիմումներն այնքան շատ էին, որ խորհուրդը Կ.Պոլսի պատրիարքին առաջարկում է ստեղծել մի հանձնախումբ, որը համակարգի ստացվող դիմումները և դրանով իսկ դյուրացնի աշխատանքները:

---

[69] ՀԱԱ, ֆ 399, գ. 1037:

Ուսումնական գործին նպաստում էր նաև ժողովրդավարություն վայելող ու լայն տարածում գտած արվեստի ճյուղերից մեկը՝ թատրոնը: Թատրոնը բնակչությանը հոգևոր սնունդ տվող, նրա զարգացմանը նպաստող հզոր ուժ էր: Ռ.Պատկանյանը իրավամբ նշում էր, որ թատրոնը հայելու նման արտացոլում է ժողովրդի մտավոր և հոգեկան վիճակը, նրա վարքն ու բարքը:

Ռուսաստանի հայաբնակ շրջաններում սկզբնապես ներկայացումներ էր կազմակերպում Կոստանդնուպոլսից թատերական շրջադայության եկած Թ.Ֆասուլաճյանի խումբը: Հետագայում, 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին նրան փոխարինեցին Թիֆլիսի, Բաքվի թատերական նշանավոր խմբերը: Պարբերական բնույթ կրող այդ ներկայացումները մեծ տպավորություն ու ազդեցություն էին թողնում բնակչության վրա: Հյուրախաղերի եկած թատերական խմբերի ներկայացումներին մասնակցում էին նաև տեղի բնակչության ներկայացուցիչները, հատկապես դպրոցների ուսուցիչներն ու բարձր դասարանների աշակերտները: Աստիճանաբար տեղերում, այդ թվում խոշոր ուսումնական հաստատություններում կազմակերպվում են սիրողական խմբեր և պարբերաբար ներկայացնում հայ և ռուս հեղինակների դրամաները: Ժամանակի ընթացքում ստեղծվեցին թատերական արվեստ սիրողների ընկերություններ և սիրողական խմբերը վերածվեցին մշտական գործող թատրոնի:

Ռուսահայ շրջաններում թատերական ներկայացումները թարմ շունչ էին հաղորդում, ազգային սովորություններն ու բարքերը ամրապնդում նրանց մեջ: Մամուլի գիր ու գրականության հետ մեկտեղ ազգային լեզվի հարցում կարևոր էր թատրոնի նշանակությունը: Մշտապես մեծ հետաքրքրություն առաջացնող թատերական ներկայացումների միջոցով ունկնդիրների ականջն ընտելանում էր գրական լեզվին: Թատրոնը վիթխարի գրական ազդեցություն ունեցավ հայերեն գրական լեզուն արմատավորելու գործում և դրանով իսկ ազգային լեզվի ուսուցմանը բերեց իր մեծ նպաստը:

Արվեստի այս ճյուղը մեկ այլ առումով, առավել գործնական եղանակով իր նպաստն էր բերում ուսման ոլորտին: Լայն տարածում էր գտել նաև սովորողների, երիտասարդության ուժերով կատարվող ներկայացումներից ստացվող գումարները ուսուցման նպատակով գործադրելու, մանավանդ օգնելու չքավոր ուսանողներին: Հաճախ տեսնելով, որ սովորողը հնարավորություն չունի ուսումը շարունակելու հատուկ ներկայացում կամ ցերեկույթ էր կազմակերպում նրան օգնելու համար:

Լազարյան ճեմարանում ևս շատ ընդունված էր ու լայն կիրառում էր գտել սովորողներին օգնելու այս եղանակը: Այսպես օրինակ 1902 թվականին ճեմարանի աշակերտները կազմակերպում են ներկայացում և հաջողությամբ ներկայացնում ռուս հեղինակների գործերը՝ Գուգոլի «Ռեվիզորը», Պուշկինի «Եվգենի Օնեգինը» /«Մշակ», 1902, նո 12/:

Տարեկան մեկ անգամ Մոսկվայի և Պետերբուրգի հայ ուսանողները կազմակերպում էին ներկայացումներ կամ երաժշտական երեկույթներ հօգուտ չքավոր հայ ուսանողների: Այդ միջոցառումներից գոյանում էր 1000 – 2000 ռուբլի գումար, որը միջոցներից զուրկ սովորողների համար բավականաչափ լավ նպաստ էր: Այդ ներկայացումներին ու երեկույթներին ներկա էին լինում նաև մյուս ազգերի ներկայացուցիչները, հատկապես ռուսները և դրանք ձեռք էին բերում նաև հայ ժողովրդի պատմամշակութային կյանքին ծանոթացնելու նշանակություն:

1893թ. Մոսկվայում, քաղաքի ամենալավ դահլիճներից մեկում հայ ուսանողների ուժերով կազմակերպվում է երեկույթ: Դահլիճն ամբողջովին ձևավորում են հայկական ոճով, իսկ մուտքը զարդարում մեծ ու փոքր մասիսների մեծադիր պատկերներով: Նվագախումբը և երգչախումբը, որը երրորդ տարին է ինչ սիրահոժար ղեկավարում էր Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Պ.Կորեշչենկոն, կատարում էին միայն հայկական երգեր: Մամուլը արձագանքեց և լայնորեն լուսաբանեց հաջող անցած երեկույթը: "Руские Ведомости",

"Московские ведомости" թերթերը դրվատալի հոդվածներ տպագրեցին երեկույթի մասին: Նույն գնահատականը տվեց նաև հայկական կենտրոնական մամուլը: «Ցանկալի է մոռանալ,- գրում էր «Մշակ» թերթի թղթակիցը,- որ այդ երեկույթները Մոսկվայում, բացի իրենց բարեգործական նպատակից ունեն և մի ուրիշ նշանակություն: Նրանք տարուց տարի ավելի ու ավելի են գրավում մայրաքաղաքի այն հասարակության ուշադրությունը, որի կարծիքն ու վերաբերումը մեզ համար շատ թանկ պետք է լինի: Նրանք միջոց են տալիս շատերին տեսնել հայության պատկերը ավելի համակրելի ձևով, քան թե շատ անգամ տեսնել ու լսել նրա մասին» /«Մշակ», 1893, նո 24/:

Նույն ձևով թերթը նշում է, որ Պետերբուրգում կազմակերպված երեկույթին հաճույքով մասնակցում են ռուսները և ծանոթանում հայ արվեստին, գրականության, հայ մտավոր կյանքին /«Մշակ», 1898, նո 224/:

* * *

Դպրոցների հաջողությունն, ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված էր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների առկայությունից և որակից: Սկզբնական շրջանում 18-րդ դարի վերջերին, 19 – րդ դարի առաջին տասնամյակներին դպրոցներն ապահովված չէին որակյալ դասագրքերով: Ուսուցման հաջողությունը կախված էր դասատուի ունակություններից: Կային կրոնական դասագրքի դեր կատարող որոշ գրքեր, այբենարաններ, օգտագործվում էր Մ.Ջամչյանի քերականությունը:

Ուսումնական ձեռնարկներից ամենից հինը և կարևորը, որով սկզբնավորվում է ուսուցումը, այբբենարաններն են: Ռուսահայերի մոտ այբբենարաններ, ուսուցման տարբեր ձեռնարկներ ստեղծվեցին հենց հայկական դաղութների ձևավորման շրջանում: Դրան առանձնահատուկ կարևորություն տալը կախված էր ստեղծված իրավիճակից: Ռուսական միջավայրում բնակություն հաստատած հայկական բնակչությունը շրջակա միջավայրի հետ հարաբերվելու համար կենսական

անհրաժեշտություն էր իրենց ապաստան տված ժողովրդի լեզուն իմանալը: Դրանից պակաս կարևոր չէր երեխաների ուսման խնդիրը: Ուրիշ խոսքով կյանքի պայմանների թելադրանքով հայերի բնակություն հաստատելը և ուսուցման կազմակերպումը համընկան: Դրանով է պայմանավորված այն հանգամանքն, որ դպրոցական այբբենարաններ, ընթերցարաններ, քերականական, վայելչագրական ձեռնարկներ ստեղծվեցին և հրատարակվեցին գերազանցապես ռուսահայ շրջաններում:

Անշուշտ, նկատի պետք է առնել, որ դրա համար Ռուսաստանում պայմաններն ավելի նպաստավոր էին, քան թե Թուրքիայի և մինչև 19 – րդ դարի առաջին երեսնամյակը Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում:

Տակավին 1788 թ. Պետերբուրգում լույս տեսավ Կլեոպատրա Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» արժեքավոր այբբենարան – ընթերցարան - բառարանը: Սարաֆյանի ձեռնարկում նախ տրվում է հայերեն բառը, ապա այդ նույնը ռուսերեն տառերով, որից հետո բերվում է ռուսերեն համապատասխան բառը: Հայերենը ռուսերեն տառադարձությամբ տրվում է հայերեն կարդալ չիմացողների համար: Մի քանի տասնամյակ այս գիրքը միակ ձեռնարկն է եղել ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն սովորելու համար: Նույն թվականին դարձյալ Պետերբուրգում հրատարակվում է Գր. Խալդարյանի երկլեզվյան ռուս – հայերեն «Գիրք որ կոչի Շավիղ լեզուագիտութեան» ուսումնական ձեռնարկ - բառարանը: Երկու գրքերն էլ հրատարակվեցին Խալդարյան տպարանում[70]:

---

[70] Նոր Զուղայի հայ վաճառական Գրիգոր Խալդարյանը Լոնդոնում հիմնադրում է տպարան և հայ եկեղեցու դավանության մասին մեկ փոքրածավալ գիրք տպագրելուց հետո 1781թ. այն տեղափոխում է Պետերբուրգ, ուր սկսում է արդյունավետ գործակցել Հ.Արղությանի ջանքերով տպարանը Պետերբուրգից տեղափոխվում է Նոր Նախիջևան, իսկ 1795 թվականին Աստրախան, որտեղ գործում է մինչև դարի վերջը: Այդ ամբողջ ընթացքում ռուսահայերի հոգևոր առաջնորդի գործուն մասնակցությամբ տպագրվում է 44 գիրք: Դրանք ուսումնական ձեռնարկներ,

Մոսկվայում հրապարակվում են մի շարք այբբենարաններ, Վարդան Սարկավագի Այբբենարանը /1827թ./, Գր. Սուքիասյանի, Այբբենք հայոց և ռուսաց /1839թ./, Կարապետ Պոպովի – նախադուռ վարժութեան /1839թ/: Ընթերցարաններից տպագրվում են՝ Սերովբե վարդապետի – Ծաղիկ գիտութեանց և պէտս դպրոցայ Հայաստանեայց /Մոսկվա, 1819/, Մանվել վարդապետի «Դպրութիւն մանկաց» /Մոսկվա, 1819/, Մանվել վարդապետի «Դպրութիւն Հայաստանեայց» /Մոսկվա, 1821/, Ա.Խուդաբաշեանցի «Գիրք նախակրթութեան հայկական լեզուի» /Ս.Պետերբուրգ, 1838/, Մկրտիչ Էմինի «Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց ... ի պէտս աշակերտաց Լազարյան ճեմարանի Արևելեան լեզուաց» /Մոսկվա 1849/:

Հայոց լեզվի, վայելչագրության, քերականության վերաբերյալ դպրոցական ձեռնարկներ են հրատարակում Ս. Սուլթանշահեանցը, Բերոևը և այլ հեղինակներ:

Հաջորդ պատմափուլում, ինչպես նշեցինք, նորանոր վերափոխումներ կատարվեցին: 19-րդ դարի կեսերից հասարակական ընդհանուր շարժումը համակեց ողջ գաղափարական կյանքն, այդ թվում նաև լուսավորության, կրթության ոլորտը: Երևան եկան պարբերականներ, աշխույժ ապրեց ուսանողությունն ու համալսարանական կյանքը, գիտության ու գրականության մեջ զգացվեց թարմ շունչ: «Ընդհանուր շարժում,- իրավամբ գրում է Ա.Հովհաննիսյանը,- ընդգրկեց նաև հայ կյանքը: Ուժեղանում էր հայ ուսանող երիտասարդության հոսանքը դեպի Ռուսաստանի կենտրոնները: Ժողովրդական լուսավորության պահանջներին սկսում են ընդառաջել ազգային դպրոցն ու թատրոնը, գրականությունն ու մամուլը: Նոր գրականության, նոր գրական լեզվի խնդիրները

---

բառարաններ, հայերին ռուսաց, իսկ ռուսներին հայոց պատմությանը ծանոթացնող աշխատություններ, դավանաբանական գործեր էին: Խալդարյանի տպարանի հիմնումն ու 20 - ամյա գործունեությունը կուլտուր – լուսավորական խոշոր երևույթ էր ոչ միայն ռուսահայերի այլև ողջ հայ մշակութային կյանքում: Տես Վ. Բարխուդարյան, Ռուսահայերի առաջին տպարանը, ՊԲՀ, 1967, նո 4:

սկսում են ծնվել ամենուրեք հենց քաղաքական եռուզեռի այս շրջանում»[71]:

Ռուսահայ ուսանողությունը համախմբվել և առանձին օջախներ էր ստեղծել կայսրության կարևոր կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Դորպատում: Ռուսական հասարակական կյանքի և ուսանողության միջավայրում նրանք հաղորդակից էին դառնում ժամանակի առաջավոր զաղափարներին, երիտասարդությանը համակած ընդհանուր շարժմանը: Հայ ուսանողությունը կապված լինելով, իրենց մեծամասնության ծննդավայրի հետ, բնականաբար ջանում էին նպաստել հայ զանգվածների հասարակական, մշակութային — կրթական առաջընթացին:

Ընդհանուր վերելքը թափանցեց նաև կայսրության ծայրամասային երկրամասերը: Անդրկովկասը դառնում էր հայոց ուսումնադաստիարակչական աշխատանքները համակարգող կենտրոն, սերտորեն կապված լինելով ռուսահայ լուսավորական շարժման հետ:

Հրապարակ եկավ մանկավարժական մամուլը: Հայ եկեղեցու օրգան «Արարատը», ևս զգալի տեղ էր հատկացնում նաև դպրոցական — մանկավարժական հարցերին: Տարբեր տարիների ու տարբեր տևողությամբ հրատարակվեցին /հիմնականում Թիֆլիսում/ Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ», «Մանկավարժանոց», Վ.Բաստամյանի «Դպրոցը»,Հ.-Տեր-Հովհաննիսյանի «Մանկավարժական թերթ» ամսագիրը, «Վարժարանը», «Աղբյուր», «Պսակ» և ուրիշ պարբերականներ: Դպրոցի ու մանկավարժության հարցերի քննարկմանը նվիրված պարբերականներ հիմնելու շարժումից դուրս չմնացին ռուսահայ շրջանները: Թեոդոսիայում 1873-1874թթ. հրատարակվեց «դաստիարակ» պատկերազարդ ամսագիրը: Մոսկվայում լույս տեսավ /1892/ կրթության հարցերին նվիրված «Մանկավարժական գրադարան» տարեգիրքը, որը դժբախտաբար շարունակություն չունեցավ:

---

[71] Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 131:

Սկսվեց նախկին սխոլաստիկ ոգին ու մեթոդները դպրոցից դուրս մղելու, նոր դասագրքեր կազմելու լայն շարժում: 1850 - ական թվականներին նոր դասագրքերի ստեղծման գործում աչքի ընկնող դեր կատարեցին նաև Լազարյան ճեմարանը, ապա Պետերբուրգի հայ ուսանողները: Հետագայում դասագրքերի ստեղծման կենտրոններ դարձան Թիֆլիսը, Շուշին, Էջմիածինը:

Հայկական շրջաններում ուսուցման նոր մեթոդների հարցում նախանձախնդիր Պետերբուրգի հայ ուսանողների հանձնարարությամբ Ս.Մանդինյանը հրատարակեց «Հայերեն կարդալ և գրել ուսուցանելու հրահանգը»: Այդ հրահանգով ուսուցչությանը ծանոթացնում էին հնչական մեթոդին, որով մեծապես արագացվեց ու դյուրըմբռնելի դարձվեց գրաուցումը: Պետերբուրգի հայ ուսանողական խմբակի ազդեցությամբ, ազգի լուսավորության ջատագով, սպա Մ.Միանսարյանը հայ դպրոցում առաջին անգամ ներդրեց գծված տետրը: Նա Լայպցիգում տպագրեց և տարածեց իր կազմած հայերեն վայելչագրության օրինակները[72]:

Աստիճանաբար մեղմացավ դասագրքի սուր պահանջ զգալու դպրոցների պահանջը: Սակայն տանելի վիճակ ստեղծվեց հիմնականում տարրական ուսումնարանների դասագրքերի հարցում: Պակասում էին բարձր դասարանների դասագրքերը և աշակերտները շատ դեպքերում բավարարվում էին ուսուցչի պատմածը գրի առնելով: Համեմատաբար լավ էր դրությունը հայոց պատմության, աշխարհագրության հարցում: Ստ.Պալասանյանի «Պատմություն հայոց» գրքի հրապարակումը /1890/ մեծ չափով բարելավեց ազգային պատմության ուսուցումը:

Ռուսահայ գաղութներում նույնպես աշխատանքներ էին տարվում որակյալ դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Այստեղ հաճախ վեճեր էր առաջանում այն հարցի շուրջը թե հայոց լեզուն դասավանդել տեղական բարբառով թե երեխաներին մեծ մասամբ անհասկանալի գրական լեզվով: Որպես

---

[72] Վ. Երկանյան, նույն աշխատությունը, էջ 90-111.

կանոն հաղթում էր բնակչությանը հետզհետե ավելի ու ավելի հասկանալի դարձող գրական լեզվով ավանդելու տեսակետը: Դասագիրք ստեղծելուն այնքան կարևոր նշանակություն էր տրվում, որ դրա համար հատուկ մրցույթ էր հայտարարվում: Նոր Նախիջևանի բարեգործական ընկերությունը 500ռ. մրցանակ էր սահմանել տարրական դպրոցների դասագրքի համար: Մրցույթի պայմաններն էին՝ դասագիրքը գրված լինի ոչ թե գավառաբարբառով այլ գրական լեզվով, նյութը լինի բազմազան և շարադրվի դյուրըմբռնելի ձևով, որպեսզի այն ծառայի թե քաղաքի և թե գյուղերի դպրոցներին[73]:

Կրթության հարցում դասագրքերից առավել կարևոր դեր ուներ ուսուցիչը: Հայ իրականության մեջ այդ թվում նաև Ռուսաստանում ուսումնական հաստատություններին մանկավարժական կադրեր էին մատակարարում Լազարյան ճեմարանը, թեմական դպրոցները, Գևորգյան ճեմարանը, Ազարաբյան ուսումնարանը: Մանկավարժական աշխատանքների էին լծվում նաև ռուսական գիմնազիաներ կամ ԲՈՒՀ-եր ավարտած կամ արտասահմանում կրթություն ստացած շատ հայ երիտասարդներ: Նոր դպրոցի պահանջներին համապատասխան անհրաժեշտ էր նոր որակի ուսուցիչներ պատրաստել: Մանկավարժական մամուլը ահազանգ էր հնչեցնում այդ ուղղությամբ: «Մեր ազգային ուսումնարանների համար, - գրում էր Վ.Բաստամյանը,- այս բոպեիս մահու և կենաց խնդիր է լավ պատրաստված վարժապետներ ունենալու խնդիրը»[74]:

Սկիզբ առավ մանկավարժական ժողովներ հրավիրելը, որը դիտվում էր որպես ուսուցիչների դաստիարակման, նրանց որակի բարձրացման լավագույն եղանակ: Ուսուցիչներ պատրաստելու այդ նույն գործընթացը տեղի էր ունենում նաև Ռուսաստանում: «Մշակ» թերթի էջերում բարձրացվում է /1873/ այն հարցը, որ Ղրիմի և Նոր Նախիջևանի դպրոցները չունեն որակյալ ուսուցիչներ և գտնվում են անմխիթար վի-

[73] «Հովիվ», 1912, ամ 15, էջ 237:
[74] «Դպրոց», 1875 – 76, ամ 6, էջ 217:

ճակում: Հոդվածագիր քաղաքագլուխ Մ.Բալաբանյանը առաջարկում էր դպրոցների միջոցներով կազմակերպել ուսուցիչներին արտասահմանում բարձրագույն կրթություն տալու հարցը: Բարեգործական կազմակերպություններին խորհուրդ էր տալիս Լազարյան ճեմարանում, բարձրագույն դպրոցներում սաներ պահելու փոխարեն այդ գումարը ծախսել ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Նոր Նախիջևանցիներին կոչ էր անում հետևել Սիմֆերոպոլի հայերի օրինակին, որոնք հատուկ ընկերություն էին հիմնել, որն իր միջոցներով դպրոցների համար պատրաստելու է ուսուցիչներ[75]:

Ի վերջո 1882թ. Թիֆլիսում հրավիրվեց հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը: Ժողովին մասնակցում էին նաև ռուսահայ կենտրոններից Ղզլարից, Մոզդոկից, Վլադիկովկասից, Նոր Նախիջևանից, Օդեսայից ժամանած 7 պատվիրակներ, որոնց թվում էր անվանի մանկավարժ Առաքել Բահաթրյանը: Ուսուցչական ժողովի բացմանը ողջունել և հաջողություններ էին մաղթել Մոսկվայի 13 հայ ուսանողներ[76]:

Հարկավ 20 օր տևած ժողովի նախագծումների մեծ մասը հետագայում հնարավոր չեղավ իրագործել: Դրանով հանդերձ ժողովի հրավիրումը և ուսուցման բազմաբնույթ հարցերի լայն քննարկումները իսկ հույժ կարևոր երևույթ էր և ցույց էր տալիս թե կրթությանը ինչպիսի վիթխարի նշանակություն էր տալիս հայ ժողովուրդը:

Մանուկների դաստիարակության ու կրթության նկատմամբ դրսևորված լավագույն վերաբերմունքի արտահայտություններից է նաև նախադպրոցական դաստիարակության նկատմամբ ունեցած ուշադրությունը: Դպրոցներում կային նախակրթարաններ, ուր երեխաներին գրաճանաչություն էին սովորեցնում, նրանց նախապատրաստում դպրոցական ուսուցման համար: Այդ այն ժամանակվա պայմաններում ուսուցման ճիշտ եղանակ էր, բայց նախադպրոցական տարիքի

---

[75] «Մշակ», 1873, Ն0 50:

[76] Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը, գրեց Հովհաննես Նազարյանը, Թիֆլիս 1883, էջ 12,29:

մանուկները դուրս էին մնում հասարակական դաստիարակության ոլորտից:

Հայ իրականության մեջ նախադպրոցական ուսուցումը կամ մանկական պարտեզների կազմակերպումը կապվում է ռուսահայ շրջանների հետ: Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հ.Խլճյանը 1870 ական թվականներին ձեռնարկում է մանկական պարտեզ բացել, բայց հաջողություն չի ունենում: Ռ.Պատկանյանը խարազանելով նման լավ ձեռնարկմանը խանգարող տգետ մարդկանց 1878թ. իր տիկնոջ հետ մանկապարտեզ բացելու թույլտվություն է ստանում: Պատկանյան ամուսինների ջանքերով կարճ ժամանակում բացվում և երկու տարի, մինչև 1881թ. գործում է մանկապարտեզը: Ռ.Պատկանյանը այդ տարիներին գրում է մանկական հոգուն հասկանալի բանաստեղծությունների ու երգերի մի ամբողջ շարք: Դրանցից են՝ «Բադիկ - բադիկ, Կարմիր թաթիկ», «Արի գարուն», «Արև, արև դուրս արի», «Ծափը», «ճիվ ճիվը» և այլն:

Անդրկովկասում նախադպրոցական դաստիարակության գործը առաջ մղեցին Եվրոպայում և Ռուսաստանում կրթություն ստացած կին մանկավարժները: Նրանցից Սոֆյա Բաբայանը 1882թ. Թիֆլիսում բացում է առաջին մանկապարտեզը: Հայ անվանի գրող Ղ.Աղայանը ոգեշնչված Բաբայանի այդ քայլով կապվում է նրա հետ և իր իսկ վկայությամբ մանկապարտեզը պատճառ է դառնում, որ ինքը դրանից հետո ամբողջովին նվիրվի մանկական գրականությանը:

Այսպիսով 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ռուսական կայսրությունում բնակություն հաստատած հայկական շրջաններում ուսումնակրթական ասպարեզը, բնականաբար ընթացել է երկրում կատարվող հասարակական – քաղաքական ընդհանուր փոփոխություններին ու զարգացմանը համընթաց: Մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը ռուսահայերի մոտ ուսուցումը կրում էր ռուսաց լեզվին տիրապետելու, ռուսաց պատմությանը ծանոթանալու դրոշմը: Հետագա պատմափուլերում ռուսական հասարակական – մշակութային, մանկավարժական առաջավոր մտքի

բարերար ազդեցությունը մեծապես կրել և այն նաև Հայաստան ու հայ իրականություն փոխանցողի դեր է կատարել:

Ռուսահայ շրջաններում ուսուցումը մանուկ սերնդին ընդհանուր կրթություն տալու հետ մեկտեղ ունեցել է իր ինքնությունն ու ազգային նկարագիրը պահպանելու միտում, ուղղվածություն:Ավելին, դպրոցական ուսուցումն է եղել հիմնական այն լծակը, որի շորհիվ պահպանվել է ազգային ինքնությունն ու ոգին: Մայր հայրենիքի հետ բազում թելերով կապված լինելով կենարար սնունդ ու լիցք է ստացել այստեղից: Սակայն հայրենիքից տարածքով կտրված ռուսական պետության մի փոքրիկ մասնիկը կազմելով և ռուսական տարածքում ու միջավայրում կղզիացած լինելով ի զորու է եղել ռուսականը ներառել և այսպես միատեղել, միավորել սեփականի հետ, որ պահպանվել ու անգամ զարգացել է նաև ազգային ուսուցումը, լուսավորական, մշակութային կյանքը:

Ինչպես բուն Հայաստանում այնպես էլ ռուսահայ շրջաններում ուսուցումը կառչած չի մնացել իր դարն ապրած պահպանողական հին մեթոդներից ու ձևերից, մշտապես ընթացել է նոր ժամանակների պահանջներին համաքայլ: Պատահական չէ, որ ռուսական կայսրությունում ապրող ժողովուրդների ընդհանուր բնութագիրը ներկայացնող տեղեկատվական աշխատությունում հայերի մասին ասվում է հետևյալը: Ազգային զգացումը նրանց մեջ պահպանվում է շատ ուժեղ եկեղեցու կողմից: Նրանք ունեն նահապետական սովորություններ, բայց չեն խուսափում նորից, եվրոպական կրթությունից[77]:

Ուսման նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքը, սերը միշտ էլ բնորոշ է եղել հայ ժողովրդին:

---

[77] Алфавитный список народов, обитающих в Российской империи, СПБ, 1895, стр. 7.

# ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ /XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋ XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ/

# КРАТКИЙ ОЧЕРК ИСТОРИИ АРМЯНСКИХ ШКОЛ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ / КОНЕЦ XVIII НАЧАЛО XX ВЕКА/


Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝ ՆԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ

Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24 գ

II
A 111394